Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԿԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ա. ՏԱՐԻ

معارف نظارت جلیله‌سنك و مطبوعات داخلیه مدیریت جلیله‌سنك
٤٤٦ نومرولی و ١٠ اغستوس ٣١٨ تاریخلو رخصتنامه‌سیله
طبع اولنمشدر

Ն. ՊՈԼԻՍ

1903

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՒԱՌԱՆ
Գրաբար, Գալատիոյ Խան, թիւ 7

491.99-8
V-23

44ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

991.99-8
Մ-23

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

معارف نظارت جلیله‌سنك و مطبوعات داخلیه مدیریت بیه‌سنك ٤٤٦
نومرولی و فی ١٠ اغستوس ٣١٨ تاریخلو رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Ա. ՊՈԼԻՍ

1903

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՓԱՆԱՆ
Կոստանդնուպոլիս, Գուրջուկլու խան, թիւ 7

Ֆ. 4

24.06.2013

8984

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им А. Мясникова
Ս. ՍՊԱՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3ԹՈ 38-62

19 NOV 2010

ԽՍ ՀՈԳԵՎԱՍՏՈՒՐ ԳԱՍՏՐԻԿ

ԻՍԿՈՒՀԻ-ԳԵՐՄԱՆԻԿԷԻՆ

ԻԲՐԵԻ ՆՇԱՆ

ԱՆՀՈՒՆ ԳՈՐՈՎԻ

ԵՌՈՒԵՐ

ԽԱՆԳԱՂԱՍ ՍՐՏԷ

ԴԱՒԹԵԱՆ

ԶԵԿՈՅՑ

Մայրենի Լեզուի նոր Ընթերցարան մը ամեն կողմէ փնտռուած ու յանձնարարուած է այս վերջին տարիներ: Թէ դրագրական եւ թէ դպրոցական շրջանակներու մէջ կը յիշեմ թէ այդ պէտքը շեշտուած է բանիցս:

Ներկայ հատորիկը առաջինն է ամբողջ Ընթացքի մը որ՝ հնուս ու փորձ դասատուներու խորհրդակցութեամբ պատրաստուած՝ անհամեմատ կերպով դիւրընտել ու շահեկան ուղղութիւնովն ու հետաքրքիր պարունակութիւնովը կը համապատասխանէ մանկավարժական նոր ընթռնումներու եւ է՝ ճշդիւ՝ ամեն կողմէ ակընկալուած Ընթերցարանը:

Մատաղ սերունդին կը նուիրենք զայն՝ առանց ո՛ր եւ է տարակոյսի թէ ԴԱՒԹԵԱՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ այս նոր դասընթացքը, աւելի քան ո՛ր եւ է ընթերցարան, օգտակար պիտի ըլլայ հայ մանուկներուն որոնց զարգացման կ՚ըղձանք անկեղծ ու հաւակիր սրտով եւ ուրախ ենք որ ապարդիւն չեն մնար մեր տքնութիւնները որ ի նպաստ իրենց:

Կ. Պոլիս, 1 Օգոստոս 1903 — Ս. Դ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ԴԱՒԹԵԱՆ

Գ. ՄԱՍ

Ա. ՇՐՋԱՆ

խաչ

ա, խ.—խա, ախ, խաչ, չախ:

ժամ

ժ, ա, մ.—ժամ, ժաժ, խաժ, մամ, չամ, խամ, մամա, խամա

ԻՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ.—*Ո՞ւր կը գտնուի խաչը:—Ինչո՞ւն կը շինուի:*

Ժամը շենք մ՚ե. ի՞նչ կ՚ընենք ժամուն մէջ:—Ինչե՞ր կը տեսնենք հոն: — Ժամուն շենքը քառակուսի՞ է թէ կլոր:—Քանի՞ մասէ կը բաղկանայ:

արտ

ատ, ար, տա.—տատ, տար, արտ, տատա, ատրատ, չար, խար, մար, մատ, ժար, ժամ, տամ

ձեռք

ձ, ա, ր.—ձար, ձեր, ձմեռ, ձեռք, ձախ, ձեռատ, ատատ, խեր, խեռ, տրեխ

ՎԱՐԺ.—Ի՞նչ կ'ընեն արտին մէջ. — Յանկէք առաջ ի՞նչ կ'ընեն: —Ինչո՞վ կը հերկեն:—Ե՞րբ կը ցանեն: — (Անձրեւ, արեւ, հասկ). Ինչո՞վ կը հնձեն ցորենը, յետոյ ո՞ւր կը տանին եւ ի՞նչ կ'ընեն:

Ի՞նչ է ձեռքը: — Մարմինին ուրիշ մասե՞րը որոնք են: — Ի՞նչ կ'ըսուի ձեռքին մէջը: — Ծայրե՞րը:—Մատերուն ծայրը ի՞նչ կայ:— Ի՞նչ կ'ընեն ձեռքով:



աչք

ա, չ, ք.—աչք, չար, ատատ

երամ, արամ, տրամ, արմատ

չար աչք, տատա, մամա, մատ, քար, քաքար, մարտ, ատամ

խաչ, ժամ, արտ, ձեռք, աչք

ձուկ

ձ, ու, կ.—ձու, ուկ, ձուկ, մուկ, եկու, երկու, երկուք, կկու, կուկու, խուրձ, քուրձ, աչք, ձեռք ու ոտք

ՎԱՐԺ.—Ո՞ւր կը գտնուի այրը: — Ի՞նչ կ'ընեն այրով: — Որո՞նք են այրին մասերը:—Ի՞նչ կ'ըսուի այն մարդը որ մէկ այր ունի:— Իսկ ա՞յն որուն այրը չի տեսներ:

Ի՞նչ է ձուկը:—Ո՞ւր կ'ապրի:—Ի՞նչ կ'ուտէ:—Ինչո՞վ կը շողայ ջուրին մէջ:—Ի՞նչ կ'ընենք ձուկը:—Քանի՞ տեսակ ձուկ կը ճանչնաս:

ձի

ձ, ի.—ձի, ձիեր, ձուկեր

մուկեր, երկու ձիեր, երկու ձեռքեր,

երկու աչքեր, երկու ձուկեր

տուր, քուր, մուր, քիչ, կիր, կեր, կեռ

աչք ու ձեռք, արտ ու քար, ձի, ձու

ժամ, մամ, տատ, մար, մատ, մարտ

մկրատ, արմատ, խաչուկ, աչուկ

ՎԱՐԺ.—Ի՞նչ է ձին:—Ի՞նչ կ'ունենք ձին:—Ի՞նչ կ'ուտէ: — Ո՞ւր կ'ապրի: –Էգը ի՞նչ կ'ըսուի:–Պզտիկ ձին ի՞նչ կ'ըսուի:



շուն

ու, ն, շ.—ուշ, նուշ, անուշ

նուռ, շուն, քուն, տուն, ձուն

անուշ, անուշիկ, անուշակ, մանուշակ

շուշան, շուն, շնիկ, տուն, տնիկ

ուր, տուր, ներ, տար, մի՛ տանիր

օղ

օ, ղ.—օղ, օղեր, քօղ,

քօղեր, օր, տօն

ՎԱՐԺ.—Ի՞նչ է շունը: — Ի՞նչ ընել է կենդանի: — Ի՞նչպէս է շունին մարմինը:—Քանի՞ ոտ ունի: — Ի՞նչ կ'ընէ շունը: — Պզտիկ շուն մը ի՞նչ կ'ըսուի:–Ի՞նչ ձայն կը հանէ շունը: — Ի՞նչ կ'ուտէ:

Ի՞նչ է օղը, ո՞վ կը գործածէ:–Ի՞նչ նիւթէ կը շինուի:—Ուրիշ զարդեղէններ ալ կա՞ն:



Էշ

Է, ու, շ, Ն.—Էշ, ուշ, Նուշ,
շուն, աշուն, անուշ, շէն, էշ, իշուկ
մէկ էշ, երկու ձի, երեք շուն

Օձ

Օ, Ձ.—Օձ, Օձեր ու Ձուկեր
մուկ ու ձուկ

ՎԱՐԺ.—Էշը քանի՞ ոտով կենդանի է:—Ո՞ւր կ'ապրի:—Ի՞նչ կ'ուտի:—Ո՞ր կենդանիին կը նմանի էշը, որն աւելի մեծ է:—Ի՞նչ ձայն կը հանէ:—Զագը ի՞նչ կը կոչուի:
Ի՞նչ է օձը:—Տեսա՞ծ էք:—Ո՞ւր կ'ապրի:—Ի՞նչ կ'ուտի:—Ի՞նչպէս կը քալէ:—Ուրիշ սողուններ ալ գիտէ՞ք:

Կատու

Կ, ա, տ, ու.—Կա, տու,
կատու, մէկ կատու, երկու շուն,
երեք ձուկ

օղ, օղի, օղակ, կող, տող, ձող
կոշիկ, շողիկ, տողիկ, ձողիկ
տէր, տէրտէր, տան տէր, արտի տէր
տանտէրն ունի շուն
կատուն կ'ուտէ մուկ
տէրտէրն ունի խաչ. ձին ոտքեր ունի

ՎԱՐԺ.—Ի՞նչ է կատուն:—Ընտանի՞ կենդանի է թէ վայրի:—Ո՞ր կենդանիին կը նմանի կատուն:—Ի՞նչպէս է մորթը:—Ոտքերուն ծայրը ի՞նչ ունի:—Ի՞նչ կ'ուտի:—Ի՞նչ ձայն կը հանէ:—Ի՞նչ կ'ընէ:
Մուկը ի՞նչ է:



սագը

ա, ու, շ, տ, ն, ս, գ, ը.

սա, նա, ան, սան, սագ, ձագ, սար,
սառ, սեր, սիսեռ

սա շուն է. տա մուկ է. նա ձի է
ո՞ւր է ձին. ո՞ւր է սագը. իմ ձիս է

խաչիկ, եկո՛ւր շունը տե՛ս։
սարգիսը ձուկ տեսե՞ր է։
սիմոն, քանի՞ տարու ես։
աս շունը մէկ տարու է։
շուշանիկ երկու օղ ունի։
շունը չորս ոտք ունի։

ՎԱՐԺ.—Ի՞նչ է սագը:—Ո՞ւր կ'ապրի:—Ի՞նչ կ'ուտէ:—Մարմինը ի՞նչպէս է:—Կը քալէ՞, կը թռչի՞ թէ կը սողայ:—Ի՞նչ կ'ընենք սագը:—Փետուրներն ի՞նչ գոյն ունին:



բադ

ա. բ. դ. դ.—բ, ա, դ.—բադ

ու, դու, դուն, բուն, շուն
սագ ու բադ, սագն ու բադը
սա, տա, նա, սան, տան, բան
բադ, բաշ, դաս, տակ, բակ, բանակ
դանակ, մկրատ, դարակ, բարակ

ՎԱՐԺ.—Բադը ո՞ր կենդանիին կը նմանի:—Ի՞նչպէս են թաթին ոտքերը:—Կրնա՞ թռչիլ: — Ի՞նչ ձայն կը հանէ:—Ո՞ւր կ'ապրի: — Ի՞նչ կ'ուտէ:



հաւ

ա, հ, ահ, աւ, հա, հաւ

դ, ս, հ, ա, ւ, ը, աւ

նա, նաւ, հաւ, կաւ, բաւ, լաւ

ահ, բահ, մահ, շահ, հատ, հակ

սագ ու բադ, հաւ ու շուն, էշ ու ձի

սահակ, սիսակ, ամբատ, շուշան

մարիամ

ՎԱՐԺ.—Ի՞նչ է հաւը:—Բերան ունի՞:—Ի՞նչ կ'ընէ:—Ի՞նչ կ'ուտէ:—Ո՞ւր կ'ապրի: — Վայրագաւիրին կամ բակին մէջ ուրիշ կենդանիներ ալ կա՞ն, որո՞նք են:—Ի՞նչ օգուտ ունի հաւը:—Ի՞նչ կ'ընուի արու հաւը որ կատար ունի եւ կը խօսի:—Ի՞նչ կ'ընուի պըզտիկ հաւը:—Իսկ պզտիկ ափաղա՞ղը:

լեռ

լ, ե, ռ, ը.—լեռ, լեռը

բեռ, լեռ, բեռներ, լեռներ, խեռ

կեռ, հեռ, սիսեռ, լիսեռ

բառ, բեռ, բէր, բիր, բերան, գերան,

գերանդի, բանդակ, լամբակ

բուռ, գուռ, դուռ, նուռ

մարտիկ, մատիկ, մօտիկ, տոտիկ

բալ, գալ, լալ, նալ, շալ, սալ, տալ

գէր, սէր, տէր, գեր, գիր, գիրք

գրիգոր, գէորգ, գորգ, գող,

կող, քօղ, հող, լող

ՎԱՐԺ.—Լեռ տեսա՞ծ ես:— Ո՞ւր կը գտնուի: — Ցա՞ծ տեղ է՝ թէ բարձր:—Ի՞նչ կայ լեռին վրայ: — Պզտիկ լեռ մը ի՞նչ կ'ընուի: — Երկու լեռի մէջտեղը ի՞նչ կ'ընուի: — Իսկ լեռը ապրող մա՞ղը:

16840-58
1/ 1/ 3/ 3/ 1/ 76

Թիւեր

մէկ երկուք երեք չորս հինգ

1 2 3 4 5

երկու ձեռք ունիմ.
հինգ, հինգ ալ՝ տասը կ'ընէ
մէկ ամիսը երեսուն օր է
երկուք երկուք ալ չորս։
մէկ՝ չորս ալ՝ կ'ընէ հինգ։
հինգ՝ հինգ ալ՝ քանի՞ կ'ընէ։

մարտը ամիս է։
տարին քանի՞ ամիս է։
մարտին ձիւն կու գայ։
ապրիլին մանիշակ կը բուսնի։
մանիշակը կապոյտ է։
գնտակը կլոր է։

ծաղիկ

ծ, ի, ղ, ծ, ձ, չ

ծա, ծաղ, ծա ղիկ, ծի ծառ

ծաու, ծիծ, ծուծ, ծամ, ծակ

ձաղ, ձայն, ձեռք, ձի, ձիթ, ձու,

ձուկ, ձոր

տանձ, դանձ, սանձ, ձմեռ, ձմերուկ

ծակ, ծակել, ծակ ու ծուկ, ծամ,

ծոմ, ծուծ, ծծել, ծծմայր, ծածուկ,

ծծուն, մածուն, ծիծաղ

չար, չեչ, չոր, չամիչ, չեչաքար, չուլ,

չամաք, մանչ, չորս, չորրորդ

ՎԱՐԺ.—Ո՞ւր կը գտնուի ծաղիկը։—Քանի՞ տեսակ ծաղիկ կը ճանչնաս։—Ի՞նչ է անոնց անունը։—Ի՞նչ կ'ընեմք ծաղիկը։—Մարդուս օգուտ ունի՞ ծաղիկը։

ՁԱՅՆԱՒՈՐ ԳԻՐԵՐ (*)

ա, ե, է, ը, ի, ո, ու, օ

ԲԱՂԱՁԱՅՆ ԳԻՐԵՐ (**)

բ, գ, դ, ղ, թ, ժ, լ, խ, ծ,
կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ,
պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց,
փ, ք, և, ֆ

բաղ, բեռ, բերան, բաղիկ, բերդ
օդ, օր, օձ, օղ, օրան, օղակ, օրիորդ

բա, բե, բէ, բը, բի, բո, բօ
գա, գէ, գէ, գը, գի, գո, գօ
դա, դե, դէ, դը, դի, դո, դօ
ղա, ղե, ղէ, ղը, ղի, ղո, ղօ

(*) Ձայնաւոր գիրերը միմիանակ կրնան ձայն հանել, առանց ուրիշ գրի օգնութեան:

(**) Բաղաձայն գիրերը ձայն կը հանեն միայն ձայնաւորի հետ:

զանգակ

գ, կ, ն, զ.—զան, զանգ

զանգակ, բանդակ, մանդակ,
զանգակատուն

մազ, զաւակ, զատիկ, զիսա
զառիկ, ազոխ, զնդան, բզէզ

զանգակը զա՛րկ, զարեհ,
դուն ալ մազերդ շտկէ,
զանգակատունը բարձր է.
զարուհի զեղին մազեր ունի.
բզէզը պզ՛զ պզ՛զ կը բզզայ

ՂԱՐԺ.—Ո՞ւր կը տեսնես զանգակը:—Ի՞նչ բանի կը գործածուի:—Ի՞նչ կ'ըսուի այն տեղն ուր մեծ զանգակ մը կախուած է:—Ե՞րբ կը հնչեցնեն զանգակը:—Ի՞նչ նիւթէ կը շինուի:

Թռչուն

Թ, ռ, չ, ն, ուն.—Թռչուն

Թռչիլ, Թան, կաթ, Թուզ, Թութ, Թուք, Թաթ, Թաղ, Թակ, Թարթիչք, Թութակ, Թթենի, Թզենի, Թուր, մութ, Թուղթ, Թերթ, Թիթեղ, Թիթեռ, Թուշ

ճանճ

ճ, ա, ն, ճ.—ճանճ, ճանկ

ճանճիկ, ճառ, ճենճ, կինճ, ճօճանակ, ճօկան, ճակնղեղ, ճրաղ

ՎԱՐԺ.—Ի՞նչ բանի է թռչուն:—Քանի՛ տեսակ թռչուն գիտէք:—Ըսէ՛ք անուններեր: Ինչպէս է թռչունին մարմինը:—Ո՞ւր կ'ապրի:—Ի՞նչ կ'ուտէ:—Ի՞նչպէս կ'որսան թռչունը:—Իսկ ձո՞ւկը:

Ո՞ւր կը գտնուի ճանճը:—Ճանճին նմանող ուրիշ միջատներ աղ գիտէ՞ք:—Ի՞նչ ձայն կը հանէ:—Ի՞նչ կ'ուտէ:—Ի՞նչ օգուտ ունի:

պայտ

ա, յ, այ, պայ, այտ, պայտ

փայտ, պայտար, պատ, պատառ, պատիճ, պատուհան, պատինճան, պարկ, պատկեր, պետրոս, անպէտ, պուտ, պտիկ, պարապ, պզտիկ

Ջուր

ու, ուր, ջ, ջուր, ջրել,

Ջրհան, ջրհոր, ջրկիր, ջրի, ջորեպան, մէջք, ջերմուկ, բանջար, ջրխոտ, մրջուն, ջորի

Ջրպանը ջուր կ'ուզէ քաշել ջրհորէն

ՎԱՐԺ.—Ի՞նչ է պայտը:—Ի՞նչ նիւթէ շինուած է:—Ո՞ր կենդանիներուն ոտքը պայտ կը գամեն:—Ո՞վ կը գամէ պայտը:—Ինչո՞ւ կը գամէ:

Ջուրը հեղո՞ւկ է:—Ուրիշ ի՞նչ հեղուկներ գիտէք:—Ի՞նչ կ'ընէք ջուրը:—Ուրկէ՞ կուգայ ջուրը:—Ի՞նչ կ'ըսուի այն տեղն ուրկէ ջուր կ'ելլէ:

վանդակ

վ, ավ, վա, վան, վանդ

վանդակ, բանդակ, դանակ

վեր, վար, վեր ու վար, վարդ, վարտիք

վարդուհի, վեդ, վարսակ

վանդակին մէջ կայ թռչուն մը

վարդը կարմիր է

վարդուհին վեր ու վար կը վազէ

վեդը խաղալիկ է

վարսակը կ'ուտէ ձին

թա, աթ, թե, եթ, թէ, էթ,

թը, ըթ, թի, իթ, թո, օթ

ՎԱՐԺ.—Թռչունները ո՞ւր կը պահենք:—Վանդակը թռչունին բնակարա՞նն է: — Իսկ գո՞մը:—Խրճի՞թը: — Հաւնո՞ցը: — Ո՞ւրջը: — Խշտի՞ը:—Դառագե՞ղը:—Բո՞յնը:

ցորեն

ց, ր, ն.—ցոր, ցորեն,

ցօղուն, ցնցուղ,

ցանկ, ցանք, ցանել

հաց, ցեց, ցից

ցորենը կը բուսնի արտին մէջ

լեցուն հասկերը

ծուռ են

պարապ հասկերը ուղիղ են

ցնցուղով ջուր կը ցանցընեն

հացը ցորենէն կը շինուի

աս տարի ցանքերը առատ են

ցանկով կը պատեն պարտէզները

թռչունը ցանցին մէջ է

ՎԱՐԺ.—Ցորենը բոյս է:—Դարի՞ն ինչ է:—Բրի՞նձը ինչ է:—Եգիպտացորե՞նը ինչ է: — Բոյս ի՞նչ ըսել է: — Ի՞նչ բայեր կը ճանչնաք:—Ի՞նչ կ'ըսուի այն տեղին ուր ցորեն կը բուսնի: — Ո՞վ կը ցանէ ցորենը:



փողը

Բ, պ, փ.—փողը, փորը, փոս
փարչ, փափաք, փարոս, փուր, փերթ,
Եփել, փքոց, փուք, փչել, փունջ, փիղ

ընկուզը կանաչ փուր ունի
ջուրը լեցո՛ւր փարչին մէջ
փքոցով կը փչեն կրակը
մեծ փորով սափոր մը
ձիւնը փերթ փերթ կը թափի

Ֆէս

Ֆ, է, ս.—Ֆէս, Ֆրֆռալ,
Ֆրանսա, Ֆսալ, Ֆշալ, Ֆշֆշալ

ՎԱՐԺ.—Պզտիկ փողը կը փչենք, ձայն կը հանէ:—Ի՞նչ նիւթէ կը շինուի փողը:—Փողը խաղալիկ է:—Ուրիշ խաղալիկներ ալ ը-սէ՛ք:—Ի՞նչ գիրով կը կապուի փսալ բառը:

Ֆէսը ի՞նչ կ'ընենք:—Ի՞նչ գոյն կ'ունենայ:—Ի՞նչ նիւթէ կը շինուի:—Վրան ի՞նչ կ'ունենայ: Ուրիշ ի՞նչ բաներու ծայրը ծոպ կը կախուի:—Ուրիշ ինչերո՞վ կը ծածկեն մարդիկ իրենց գլուխը:

ԳԼԽԱԳԻՐ ԱՑՐՈՒԹԵՆԸ

ա	Ա	ծ	Ծ	ջ	Ջ
բ	Բ	կ	Կ	ռ	Ռ
գ	Գ	հ	Հ	ս	Ս
դ	Դ	ձ	Ձ	վ	Վ
ե	Ե	ղ	Ղ	տ	Տ
զ	Զ	ճ	Ճ	ր	Ր
է	Է	մ	Մ	ց	Ց
ը	Ը	յ	Յ	ւ	Ւ
թ	Թ	ն	Ն	փ	Փ
ժ	Ժ	շ	Շ	ք	Ք
ի	Ի	ո	Ո	և	
լ	Լ	չ	Չ	օ	Օ
խ	Խ	պ	Պ	ֆ	Ֆ

ԲԵՐԱՆԱՑԻ ՀՐԱՀԱՆԳ

Վարժապետը.—Ըսէք, տղաք, ո՞ւր կը տեսնէք խաչ։

Աշակերտները.— . . . .

Վ.—Ուրիշ ինչե՞ր կը տեսնէք ժամին մէջ։

Պ.— . . . . .

Վ.—Ուրի՞շ, ուրի՞շ։ Դո՛ւն ալ ըսէ, Խաչիկ։

Պ.— . . . . .

(Շարունակեցէք այսպէս՝ հարցումներ ուղղել բոլոր աշակերտներուն զաս զաս։)

ԳՈՅ ՍՈՐՎԵԼԻՔ

Ժամին մէջ կայ խաչ ու խորան,
Զահ ու բուրվառ, աւետարան,
Շուրջառ, փիլոն, կըլոր թագեր
Խորանին վրայ սուրբի պատկեր։
Կը հաւաքուին հոն շատ մարդիկ
Աղօթք կ'ընեն մեծ ու պզտիկ
Ցեղայ կ'առնեն մաս ու նշխար
Բոլոր մարդիկ համ—հաւասար։

Ի՜ կարդա՛ Իվ

Թիւը կը համրեմ մէկիկ մէկիկ
Հաշիւ կ'ընեմ միտքովս
Հովիւը ոչխար կ'արածէ
Անիւը կը դառնայ շուտ շուտ
Տաւիղը նուագարան է
Գրիչով կը չափեն ցորենը
Հիւանդը դարմանի կարօտ է։

Ի՜ և

Զիւնը ճերմակ է։
Հարիւրը թիւ է։
Գիւղին մէջ կ'ապրին մշակները։
Արիւնը կարմիր է։
Գուլպայ հիւսել գիտե՞ս։
Զիւնի հիւս կ'ինչնէ լեռնէն։
Ալիւրը ճերմակ է։

ԳԼԽԱԳԻՐ ԽԱՌՆ

Ա Թ Ջ Ձ Ց Բ Ժ Պ

Ղ Ի Գ Ի Ճ Ջ Փ Դ

Ընկերներուս անունները

Աւետիս Դաւիթեան
Սրբուհի Յովսէփեան
Գրիգոր Մանուկեան
Դաւիթ Եսայեան
Շնորհք Գալուստեան
Սիմոն Յովհաննեան
Թորոս Շահնազարեան
Արուսեակ Զարդարեան

ԲԵՐԱՆԱՑԻ ՀՐԱՇԱՆԳ

Վարժապետը.—*Միքայէլ, ըսէ՛ ընկերներուդ անունները։*

Միքայէլ.— . . . . . .

Վ.—*Նորէն ըսէ, Ղուկաս, և միտքդ պահէ համրանքը։*

Ղուկաս.— . . . . . .

Վ.—*Ուրեմն քանի՞ դասընկեր կայ ձեր դասարանին մէջ։*

Ղ.— . . . . . .

Վ.—*Հիմա տախտակին վրայ պիտի գրեմ ամ անունները և դուք ալ պիտի օրինակէք ձեր տետրակին մէջ։*

Խաչը չորս թեւ ունի։
Յիսուս մեռաւ խաչին վրայ։
Յանին մէջ կը տեսնեմ՝ խորան, ջահ, վարագոյր, մոմ, խաչ, խաչկալ . . . . (ուրի՞շ)։

Արտերը տուներէն հեռու կ'ըլլան։
Արտին մէջ կ'աշխատին մշակները։
Եղները կը քաշեն արօրը։
Հնձողը կը ցանէ՝ ցորեն, գարի, վարսակ և ուրիշ հատիկներ։

ԳԼԽԱԳԻՐ՝ ԽԱՌՆ

Լ Մ Ռ Գ Ե Խ Ց Է
Ս Օ Զ Ծ Ն Վ Ֆ Կ
Շ Տ Ը Հ Ո Ր

Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՄ

Ոտքով կը պտտիմ.
Ձեռքով կ'աշխատիմ.
Աչքով կը տեսնեմ.
Ականջով կը լսեմ։
Իսկ չարն ու բարին՝
Գէշն ու աղէկը
Ցոյց կու տայ մերին
Սուր մտքին դեկը։

Յ՝ ԱՆՁԱՅՆ

Տղայ, շուկայ, ընծայ, քահանայ,
դուքայ, ճամբայ, կայ

Տղան կուգայ, կ'երթայ, կը կարդայ, կ'իմանայ,
կը մտնայ, կ'ուշանայ, կը խնդայ, կուլայ,
կուտայ, կը դառնայ, կը ստանայ

Ահա եկայ, իմացայ, մտացայ, ուշացայ, հասայ,
ուրախացայ, կերայ, կշտացայ։

Յ՝ ԿԻՍԱՁԱՅՆ

Հայ, վայ, չայ, հայր, մայր, ծայր,
գայլ, սայլ, փայլ, քայլ, այծ
լոյս, բոյս, կոյս, յոյս, ծոյլ, թոյլ

Յ՝ ԲԱՂԱՁԱՅՆ

Ցոյս, յոյն, յարդ, յարգ, յարկ,
յիշատակ, յիշել, յանկարծ,
յայտնի, յատակ, Յուդայ

Ձուկը կ'ապրի ծովին մէջ։
Ձին ու էշը խոտ կ'ուտեն։
Շունը ոսկոր կը կրծէ՝
Տուն ու երդիք կը պահպանէ։
Եզը որոճացող(*) կենդանի է։
Հաւը հաւկիթ կ'ածէ։

(*) Բացատրեցէք թէ ի՞նչ է որոճալը։—Ուրիշ ո՞ր կենդանիներ որոճացող են։

ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Ես աչքովս կը տեսնեմ
Ականջովս կը լսեմ
Քիթովս է որ հոտ կ'առնեմ
Լեզուովս է որ համ կ'առնեմ։
Պաղն ու ցուրտը կամ շողն ու տաք
Կոշտ ու կակուղ առարկաներ
Ինչո՞վ կը զգամ, գիտէ՞ք տղաք,
Երբոր զանոնք եմ շօշափեր։

ԲԵՐԱՆԱՑԻ ՀՐԱՀԱՆԳ

Վարժապետը.—Ըսէ՛, Թո՛րոս, որո՞նք են ձայնաւոր գիրերը։

Թորոս.—ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ։

Վ.—Կրնա՞ս ինծի ըսել երեք բառ ասով սկսող։

Թ.—Աւազ, արեւ, անձրեւ։

Վ.—Մարիա՛մ, դուն ըսէ երեք բառ եով սկսող։

Մարիամ.—Եկեղեցի, երկաթ, երկինք։

Վ.—Խաչի՛կ, դո՛ւն ալ գտիր երեք բառ էով սկսող։

Խաչիկ.—Էշ, Էմմանուէլ, էգ։

Վ.—Բայց գիտցի՛ր որ էով սկսող շատ բառ չկայ։ Հիմա, Միհրանիկ, դո՛ւն ըսէ ըով սկսող բառեր։

Մ.—Ընկեր, ըմբիշ, ընծայ, ընկոյզ։

Վ.—Ստեփա՛ն, դո՛ւն ալ իով սկսող բառեր գտիր։

Ստեփան.—Ինձ*, իւղ, Իսկոնի։

Վ.—Գարեգի՛ն, դուն ալ ոով բառեր ըսէ։

Գարեգին.—Ոսկի, ոսկոր, ոստրէ, ոջիլ։

Վ.—Իով սկսող բառ չկայ։ Ըսէ՛, Նշան, քանի մը հատ օով սկսող բառ։

Նշան.—Օղ, օր, օրան, օձ, օղ, օճառ, օշարակ, օրինակ, ororոg, օղակ։

Վ.—Հիմա, այդ բառերը գրեցէք ձեր տետրակին մէջ։

ՄԷԿ ՎԱՆԿՈՎ ԲԱՌԵՐ

Խաչ, ժամ, արտ, աչք, ձեռք, ձուկ, ձի, շուն, էշ, օղ, օձ, սագ, բոգ, հաւ, լեռ, ծառ, թիւ, ճանճ, պայտ, ջուր, փող, ֆէս։

ԵՐԿՈՒ ՎԱՆԿՈՎ ԲԱՌԵՐ

Պատկեր, ծաղիկ, զանգակ, թռչուն, կատու, վանդակ, ցորեն, գարի,—Արև, բարև, անձրև, տերև, Եւա։

ԵՂԱՆԱԿՆԵՐ

Գարուն, ամառ, աշուն, ձմեռ

ՕՐԵՐ

Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի

(*) Ինձ=վայրի կենդանի մը, (Բացատրել)։ Ուրիշ վայրի կենդանիներու անուն ըսէք։ – Ընտանի կենդանիներ կը ճանչնամ։

ՀՈՎԱՆՈՑԻ ՏԱԿ

Հինգ տղայ՝ ամէն մէկին ձեռքը կատուի ձագ մը՝ մտեր էին պատուած հովանոցի մը տակ։ Ամէն մէկը կը պարծենար թէ իր կատուաձագն է գեղեցիկ, ու փաղաքշելով կ'ըսէին. «Փիսիկս, անո՛ւշ փիսիկս»։ Անոնք կ'ըսէին որ եթէ ձիւն կամ անձրեւ տեղայ, այնպէս հովանոցին տակ կը մտնեն ու կը պատսպարուին։ Եւ ճիշտ այսպէս ըրին, կատուաձագերն իրենց հագուստին մէջ փաթթելով և զիրար հրելով՝ հովանոցին տակ մտեր էին իրրև թէ ձիւն կուգար։

1	2	3	4	5
մէկ	երկու	երեք	չորս	հինգ
6	7	8	9	10
վեց	եօթը	ութը	ինը	տասը

ՀԵԳԵԼ ԿԸ ՍՈՐՎԻՄ

Այբուբենի գիրերը կը ճանչնամ ամէնն ալ երեսունը ինը հատ են։ Ութը հատ ձայնաւոր գիր կայ։ Երեսունը մէկ հատ ալ բաղաձայն գիրեր։

Երկու երեք գիր քով քովի կը բերեմ և մէկ անգամէն կ'ըսեմ, այսպէս՝

Հ Ա Ց	(հ ա ց)	կ'ըլլայ	հաց
Մ Ա Տ	(մ ա տ)	կ'ըլլայ	մատ
Ք Ա Ր	(ք ա ր)	կ'ըլլայ	քար

Հաց, մատ, քար

մէկ վանկով կրնամ գրուցել։(*)

ԽԵԼՔԸ Ո՞ՒՐ Է

1. Բերանն ըսաւ.
   —Ես ամէն բան կ'ուտեմ, կը խմեմ.
   Գլուխն ըսաւ.—Հը՛մ։
2. Ձեռքն ըսաւ.
   —Ես ամէն բան կը շինեմ կ'աւրեմ։
   Գլուխն ըսաւ. — Հը՛մ։
3. Լեզուն ըսաւ.
   —Ես ինչ որ ուզեմ, կ'ըսեմ, կը պատմեմ։
   Գլուխն ըսաւ. — Հը՛մ։

(*) ՎԱՐԺ.—Մէկ վանկով ուրիշ բառեր ալ գտէք։—Ըսէ՛ք ինչ գիրերով կը կազմուին անոնք։

4. Ոտքն ասաւ.
—Ես ամէն տեղ կ'երթամ, կը շրջիմ։
Գլուխն ասաւ. — Հը՛մ։

Բերան, ձեռք, լեզու, ոտք միաբերան ըսին գլխուն.
—Գլո՛ւխ աղբար, ինչո՞ւ հրամ հրամ կ'ընես։
—Դուք ամէնքդ ալ ինչ որ ընէք
Առաջ պիտի ինձ հարցընէք։
Բերանը բաց մնաց. իսկ լեզուն՝ կմկմալով ասաւ.
—Ճի . . . ճի . . . ճի՞շտ է դը դը դըլուխը . . .։

ՀԵԳԵԼ ԿԸ ՍՈՐՎԻՄ

Մէկ վանկ

Մէկ վանկով բառեր մէկ հնչումով կ'ելլեն մեր բերանէն

Գետ, լեռ, ծով, կով, հով

Երկու վանկ

Զան դակ, թռ չուն, ծա ղիկ,
պատ կեր, հայ բիկ, մայ բիկ, դպ րոց

երկու վանկով բառեր են

Տատ բակ, տա խակ, վեր մակ, տեղ բակ

ասոնք ալ երկու վանկով են

Գետ	մէկ վանկ է,		**գետակ**	երկու վանկ է։	
սոխ	„ „	է,	**սոխակ**	„ „	է։
ծով	„ „	է,	**ծովակ**	„ „	է։
հորթ	„ „	է,	**հորթուկ**	„ „	է։

Երեք վանկ (*)

Երեք հնչումով կարդացուող բառը երեք վանկ է

Ա գա բակ, ա շա կերտ, քա հա նայ

Վար ժա պետ, շո գենաւ, Մի քայ էլ

ասոնք ալ երեք վանկով բառեր են

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

(Կարդացէք սա թիւերը, յետոյ գիրով ալ գրեցէք)

5, 4, 3, 1, 8, 9, 2, 6, 7

(Նոյն թիւերը կարգով շարեցէք մէկէն մինչեւ ինը)

---

1. Ի՞նչ թիւ կ'ունենանք, երբ 1ին առջեւը 0 դնենք
2. » » » » 1ին վրայ 2 աւելցնենք
3. » » » » 1ին » 3 »
4. » » » » 1ին » 4 »
5. » » » » 1ին » 5 »
6. » » » » 1ին » 6 »

(Շարունակեցէք այս վարժութիւնը՝ բոլոր միաւոր թիւերուն վրայ: Նոյնը գրեցէք տախտակին վրայ, եւ աշակերտները բոլոր օրինակեն):

(*) ՎԱՐԺ.—Ըսէք 5 բառ մէկ վանկով:—5 բառ երկու վանկով, 5 բառ երեք վանկով:



ԱՔԼՈՐԸ

Ինչո՞ւ աքլորը բակին մէջ կեցած՝ պինդ ձայնով կը պոռայ, ինչո՞ւ։

—Անոր համար որ արեւը շատոնց ծագեր է, բայց ծոյլ տղան դեռ չէ արթնցեր քունէն։ Դեռ չէ ելեր անկողինէն, երեսը չէ լուացեր, աղօթք չէ ըրեր, դաս չէ սերտեր։ Աքլորը կը կանչէ, կը պոռայ, որպէս զի հողոյ միտքը ձգէ երեսնց պարտքը։

Ես գիտեմ թէ ի՞նչ են իմ պարտքերս։

ՎԱՐԺ.—Վերի դասը կարդացէք, եւ ապէ՝ ըսէք թէ քառերը քանի՞ վանկով են։

ՇՈՒՆ

(Իրազնեական վարժութիւն)

1. Ի՞նչ է շունը։
2. Ո՞ւր կ'ապրի։
3. Ի՞նչ կ'ուտէ։
4. Քանի՞ մասէ կազմուած է շունին մարմինը։
5. Որո՞նք են այդ մասերը։
6. Գլխուն վրայ ի՞նչ կայ։
7. Գլուխը ինչո՞վ միացած է բունին։
8. Մարմնին եւեղը ի՞նչ կայ։
9. Քանի՞ ոտ ունի։
10. Շան ոտքերը ի՞նչ կը կոչուին։
11. Ի՞նչ կայ բաբերուն ծայրը։
12. Ուրիշ չորքոտանիներ ալ կը ճանչնա՞ք։

Պատասխանները գտնելու պիտի օգնի ուսուցիչը իր տալիք ծանօթութիւններով։

Ա. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հայ—հայի
Ծառ—ծառի
Պատ—պատի
Քար—քարի
Հաւ—հաւի
Սագ—սագի
Բադ—բադի

Հայի փոր.—հային փորը։
Ծառի ճեղ.—ծառին ճեղը։
Պատի ծեփ.—պատին ծեփը։
Քարի կոյտ.—քարին կոյտը։
Հաւի միս.—հաւին միսը։
Սագի փետուր.—սագին փետուրը։
Բադի հաւկիթ.—բադին հաւկիթը։

Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հային փորը կակուղ է։
Ծառին ճեղը բարակ է։
Պատին ծեփը ճերմակ է։
Քարին կտորը կարծր է։
Հաւին միսը համեղ է։
Սագին փետուրը թեթև է։
Բադին հաւկիթը մեծ է։

ԱՆԱՌԱԿ ՏՂԱՆ

Պետիկ կ'ուզէր միշտ չարութիւն ընել ուրիշին։

Շատ անգամ դրացի Վառվառ խաթունին դրան բախոցը կը զարնէր, և անհանգիստ կ'ընէր։

Խեղճ կինը կու գար կը գանդատէր Պետիկին մօրը. ան ալ կը ջախէր իր տղան, բայց Պետիկ նորէն դիտցածը կ'ընէր։

Օր մը Վառվառ խաթուն դրանը եռին սպասեց՝ ձեռքը աւելի կոթ մը բռնած։ Պետիկ նորէն եկաւ դուռին զարկաւ. Վառվառ խաթուն մէկէն դուրս վազեց, Պետիկին օձիքէն բռնեց և անանկ տփոց մը քաշեց որ չարաճճի անառակը մէկ մ'ալ ատ չարութիւնը չընել ուխտեց։

ԲԱՐԻ ԸԼԼԱԼ

Երանիկ սիրուն աղջիկ է։ Մինակ սիրուն չէ՝ բարի ալ է։ Երէկ ճաշի ատեն տեսաւ որ Ֆուլիկ գարտակ հաց կ'ուտէ։ Ելաւ իր ծրարը առաւ Ֆուլիկն քով գնաց և անոր հետ կիսեց իր ունեցած ուտելիքները — միս, ձուկ, պանիր և ձմերուկ։

Ո՞Վ

Ո՞վ փուռին մէջ կ'եփէ հացը,
Ո՞վ կը կտրէ տըղուն լացը·
Ո՞վ կը վարէ նաւ կամ նաւակ,
Ո՞վ կը բերէ մեզի նամակ։
Ո՞վ կը բռնէ այնքան մուկեր,
Եւ ո՞վ կ'որսայ այնքան ձուկեր։
Տղաքներուն ո՞վ դաս կուտայ,
Կրնա՞ս ըսել, ո՞վ էր Յուդայ։
Ո՞վ կը շինէ օդ, մատանի,
Ո՞վ ձեզի միշտ հոգ կը տանի։
Ո՞վ կ'արածէ դեղին հօտը,
Ո՞վ կը քաղէ դաշտին խոտը։
Ո՞վ կը գրկէ ամէն բարիք
—Զայն սիրելէ մի՛ դադարիք։

Այս հարցումներուն պատասխանը գտնել տալ աշակերտներուն։ Յետոյ գոց սորվեցընել հատուածը։

Գ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Քարը հայելն աւելի կարծր է։
Սագի փետուրով գիր կը գրուի։
Պատին ծեփը թափեր է։
Բադն ունի փետուր։
Ծառը շատ ճեղեր ունի։
Հաւին կտուցը սուր է, կատաղը կարմիր, փետուրները խատուտիկ։

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՄԻՍՆԵՐ

Յունվար	Փետրվար	Մարտ
Ապրիլ	Մայիս	Յունիս
Յուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր

ՏՕՆԵՐ

Աւետում, Ծնունդ, Մկրտութիւն, Ծաղկազարդ, Զատիկ, Տեառնընդառաջ (Տէրընտաս), Վարդավառ, Աստուածածին, Խաչ, Լուսաւորիչ։

ԲԱՌԱԽԱՂ

Պողոսն ու Թորոսը բառախաղ կ'ընէին։ Պողոս վարժուած էր, Թորոս դեռ նոր կը սորվէր։

Ահաւասիկ անոնց խաղը.

Պողոս.—Թորոսի՛կ, ըսէ «տո՞ւնը»։

Թորոս.—Տո՞ւնը։

Պողոս.—Բեղ խածնէ շունը։ Ըսէ՛ «դու՞ռը»։

Թորոս.—Դո՞ւռը։

Պողոս.—Ինչպէս դուռը։ Ըսէ՛ «Զո՞ւրը»։

Թորոս.—Զո՞ւրը։

Պողոս.—Երեսիդ գայ մուրը։

Թորոս այս կատակէն առնուեցաւ, կարմրեցաւ ու ընկերին ըսաւ.

—Ա՛լ չեմ՝ ըսեր, հիմա ալ ե՛ս քեզի հարցնեմ.

Պողոս.—Շատ աղէկ, հարցո՛ւր։

Թորոս.—Ըսէ՛ «չամիչ»։

Պողոս.—Զամիչ։

Թորոս.—Ուտես ապտա՛կ։

Պողոս.—Օ՜, ատ չեղա՞ւ, չամիչն ու ապտակը չ'յարմարեցան. պէտք է որ վերջին վանկերը իրարու նմանին։ Կեցի՛ր ես նորէն հարցնեմ. ըսէ գիտե՞ս։

Թորոս.—Գիտե։

Պողոս.—Պետրոս կոպի՞տ է։

Թորոս.—Ա՛լ չեմ ըսեր, ես կոպիտ չեմ։

Պողոս.—Լա՛ւ, շարունակենք։ Ա՛լ ատանկ բան չեմ ըսուցեր։ Ըսէ՛ «հա՛ւ է»։

Թորոս.—Հա՞ւ է։

Պողոս.—Թորոսը լաւ է։ Ըսէ՛ «սա՞նձ»։

Թորոս.—Սանձ։

Պողոս.—Թորոսն ուտէ տանձ։

Թորոս.—Հիմա ալ ես հարցընեմ։ Ըսէ՛ «թուշ»։

Պողոս.—Թո՞ւշ։

Թորոս.—Պողոսն ուտէ նուշ։ Ըսէ՛ ձի։

Պողոս.—Զի։

Թորոս.—Է՛, քիչ մը կեցի։

Պողոս.—Ա՛լ հերիք է, քիչ քիչ կը վարժուիս։

ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐ

Մարդուն բնակարաններն են՝ տուն, խանութ, դպրոց, եկեղեցի, վանք, բաղնիք, պանդոկ, ջաղացք, ագարակ, վրան, խրճիթ, թատրոն։

Իսկ կենդանիներու բնակութեան տեղերն են՝ ախոռ, գոմ, փարախ, բոյն, որջ, խշտիք, և այլն։

Գեղացին կը բնակի հիւղի կամ խրճիթի մէջ, հովիւը՝ վրանին տակ, զինուորը՝ զօրանոցին մէջ, հարուստը՝ ապարանքի և ամարանոցի մէջ, քահանան եկեղեցիին մէջ, ճամբորդը պանդոկի մէջ, կրօնաւորը՝ վանքի մէջ, ճգնաւորը՝ անապատի և քարայրի մէջ։



Թռչունը՝ բոյնի մէջ, օձը՝ հողին մէջ, արջը, առիւծը՝ որջի մէջ, ձին՝ ախոռի մէջ, ոչխարը՝ գոմի մէջ, ձուկը ծովին մէջ, սարդը՝ ոստայնին մէջ, կրիան՝ պատեանին մէջ, մեղուն՝ փեթակին մէջ, շերամը՝ խոզակին մէջ։

Ի՞Նչ

Ի՞նչ է վարդը,
„ է սարդը,
„ է շունը,
„ է տունը,
„ է տանձը,
„ է սանձը,
„ է սոխակը,
„ է մեխակը,
„ է շապիկը,
„ է կապիկը,
„ է Իջեւան,
„ է Մարզուան։

(Պատասխանները կը գտնէք հետեւեալ խօսքերուն մէջ)։

Սանձը ձիու կազմածներէն մէկն է.
Մարզուանը քաղաք է.
Վարդը և մեխակը ծաղիկ են.
Իջեւանը և տունը բնակութեան տեղեր են.
Կապիկը և շունը կենդանի են.
Տանձը պտուղ է.
Սոխակը թռչուն է.
Շապիկը հագուստ է։

Դ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հայ—հայեր։ Ծառ—ծառեր։
Պատ—պատեր։ Քար—քարեր։
Հաւ—հաւեր։ Սաղ—սաղեր։
Բաղ—բաղեր։ Աչք—աչքեր։

Մաղ—մաղեր։ Ձեռք—ձեռքեր։
Թև—թևեր։ Ոտք—. . .
Հայր—. . . եր։ . . .—մայրեր։
Քոյր—. . . ։ Խաչ—. . .
Մաս—. . . ։ Խոտ—. . .

Տուն, շուն, քուն, հուն, բուն, դուն, լուն, ձուն։

Տուներ, շուներ։
Տուներու, շուներու։
Տունի շուն, շունի տուն։
Հաւի բուն, գող կատուն։

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԵՐՍ

Եօթը տարեկան էի, երբ կարդալ սկսայ, շատ դժուար եկաւ գիրերը ճանչնալը։ Շարունակ կը սխալէի, գ և դ, ո և ս, զ և ղ իրարու հետ կը շփոթէի։ Կամաց կամաց վարժուեցայ։ Եաքը, պզտիկ քառակուսի փայտերով սկսայ վանկեր կազմել ձայնաւոր ու բաղաձայն միացնելով՝ բառեր շինել։

Կամաց կամաց բոլոր գիրերը սորվեցայ, վանկերը կրնամ միացնել և ամբողջ բառերը կարդալ. կարդացածս կը հասկնամ և համ կ'առնեմ. կ'ուզեմ որ աւելի շուտ, աւելի շատ ու լաւ կարդամ։

ՀԱՐՍԻՆ ՀԱՇԻՒԸ

Երկուշաբթի հայ կը թխեմ.
Երեքշաբթի լոշ կը թրջեմ.
Չորեքշաբթի լուացք կ'ընեմ.
Հինգշաբթի օր կար կը կարեմ.
Ուրբաթ օրը պահք կը կենամ.
Շաբաթ օրը ես ժամ կ'երթամ.
Կիրակի լոյս՝ հագուած սաղուած՝
Վաղեմ կանուխ տունն իմ մօրանց։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հետեւեալ թիւերը կարդացէ՛ք։ Ցեսոյ կարգով շարեցէք, պզտիկեն մեծ երթալով։

40, 28, 9, 31, 12, 6, 25, 34, 12, 14, 1, 55, 23, 11

ԵՐԱՋ

Երկու ճամբորդ հաւ մը ունէին ուտելու։ Մէկը միւսին ըսաւ.

«Ա՛ս հաւը երկուքիս չ՚օգտեր. եկո՛ւր երկուքս ալ քնանանք, ո՛վ որ աղէկ երազ տեսնէ, ա՛ն թող ուտէ հաւը։»

Ա՛ս ըսողը քնացաւ. իսկ միւսը, անոր քնանալէն վերջ, առջին առաւ պաշարը, կուշտ ու կուռ կերաւ կշտացաւ։

Քնացողը արթնցաւ ու ըսաւ.

«Զարմանալի երազ մը տեսայ. հրեշտակները իս երկինք կը տանէին։»

Հաւը ուտողն ըսաւ.

«Ես ալ տեսայ որ դուն երկինք կը բարձրանայիր՝ հրեշտակներու թեւերուն վրայ։ Միտքովս ըսի որ ա՛լ անիկա վար չ՚իջներ, ու հաւը կերայ։»

Ի՞ՆՉՊԷՍ

Սև է ածուխը, ճերմակ է կաթը.
Թեթև է թուղթը, ծանր է երկաթը.
Բարձր է արևը, խոր են ծովերը.
Տաք է կըրակը, ցով են հովերը։
Մութ է գիշերը, պայծառ է առտուն,
Աղտոտ է խողը, մաքուր է կատուն։
Բարկ է քացախը, քաղցր է շաքարը,
Կակուղ է բուրդը, կարծր է սա քարը։
Արագ կ՚երթայ ձին, դանդաղ է էշը։
Ցարդի է լաւը, անարդ է դէշը։

Հեռու են լեռներ, մօտ են ծառերը,
Ազնիւ է բարին, վատ են չարերը։
Շունն է խելացի, ապուշ է սագը,
Մեծ է տոպրակը, փոքր է քըսակը։
Ցիր է մրջիւնը, ծոյլ է ճըպուռը,
Թանձրը է փայտը, հեղուկ է ջուրը։
Կարճ է շաբաթը, երկայն է տարին,
Ատենք միշտ չարը, սիրենք միշտ բարին։

Ե. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հացեր—հացերու
Ծառեր—ծառերու
Պատեր—պատերու
Քարեր—քարերու
Սագեր—սագերու
Բադեր—բադերու

Հացերը—հացերուն
Ծառերը—ծառերուն
Պատերը— . . .
Քարերը— . . .
Հաւերը— . . .
Սագերը— . . .
Բադերը— . . .

Հացերուն կակուղ միջուկը կ'ուտեմ։
Ծառերուն վրայ խնծոր կայ։
Պատերուն քարերը խոշոր են։
Հաւերուն փետուրները թեթեւ են։
Սաղերն ու բաղերը կուտ կ'ուտեն։

ԱԳԱՀ ՇՈՒՆԸ

Կար ու չի կար շուն մը կար. օր մը այս շունը բերանը կտոր մը միս առած՝ կ'ուղէր անցնիլ կամուրջէն։ Ցանկարծ վար նայեցաւ և տեսաւ որ ուրիշ շուն մ'ալ կ'անցնէր ջուրին մէջէն՝ նոյնպէս մեծ կտոր մը միս առած բերնին մէջ։ Շունին ագահութիւնը շարժեցաւ. սկսաւ հաչել և վար ցատքելով կամուրջէն՝ ուզեց միւսին ձեռքէն խլել միսին կտորը։

Բայց տե՛ս ի՞նչ պատահեցաւ։ Շունը հաչելու և վար ցատկելու պահուն, բերնէն ճգած էր միսի կտորը զոր ջուրերը քշեցին տարին անմիջապէս. որով ո՛չ ուրիշ շուն գտաւ և ո՛չ ալ միսի կտոր։ Կենդանին խաբուեր էր իր շուքէն։

Ագահութիւնը իր ունեցածէն զրկեց զայն։

(Այս առակը կարդալէ վերջը բերանացի ալ բող պատմեն աշակերտները։)

ԻՐԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հարցումներուն պատասխանեցէք.

Ի՞նչ է շուշանը, ի՞նչ է շերամը, ի՞նչ է գայլը, ի՞նչ է ագարակը, ի՞նչ է խաղողը, ի՞նչ է թութակը, ի՞նչ է յասմիկը, ի՞նչ է շապիկը, ի՞նչ է ջուրին, ի՞նչ է բաղնիքը։

ԽԵԼՕՔՆ ՈՒ ԱՆԽԵԼՔԸ

Անգամ մը խելացին ըսաւ անխելքին.

—Խելո՛ք կեցիր, եթէ ոչ՝ ականջէդ կը բռնեմ, լեռնէ լեռ կը պարտցնեմ քեզ։

Անխելքը պատասխանեց.

—Դուն ալ հե՞տս պիտի գաս։

—Այո՛, ըսաւ խելացին։

—Ուրեմն դուն ալ ինծի պէս անխելք կ'ըլլաս։

ԿՆԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Արաքսի, Բրաբիոն, Գոհարիկ, Դոմնա, Երանիկ, Զարուհի, Էֆտիկ, Ընծայ, Թագուհի, Իսկուհի, Լուսաբեր, Խոսրովուհի, Ծաղկինէ, Կալինիկէ, Հռիփսիմէ, Ղամբէուհի, Մաղդաղինէ, Յուլիանէ, Նունէ, Շահանդուխտ, Ոգուհի, Պաւլինէ, Ռամելա, Սանդուխտ, Վարդուհի, Տիրուհի, Փերբունէ, Քրիստինէ, Օֆելիա, Ֆիմի։

ՈՒՏԵԼԻՔ ՈՒ ԽՄԵԼԻՔ

Մարդը կ'ուտէ, կը խմէ, կը կրծէ, կը ծծէ, կը ծամէ, կը լղէ, կը խածնէ, կը կլէ։

Գինին կը խմէ, քայլին ու ձէթը կերակուրի մէջ կը խառնէ։

Կաթը թէյի հետ կամ զատ կը խմէ։

Մանուկը կը ծծէ մօրը կաթը։

Արգանակը, ապուրը, թանապուրը, բաղկէթանը, թթու ապուրը, անուշ ապուրը, եղինձը դգալով կ'ուտէ։

Միսը կ'ուտէ, ոսկորը կը կրծէ։

Դեղը, եթէ ջուրի պէս հեղուկ է, կը խմէ. եթէ դեղահատ է, կը կլէ։

Կարծր կերակուրները կը ծամէ ակռաներով և կը կլէ։

Ձիւթը կը ծամեն որոճայող ուղտի պէս։

Շունը կը լակէ, կը լափէ։

Մուկը կը կրծէ։

Թռչունը կը կոյէ։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հետեւեալ թիւերը կարդացէ՛ք, եռմն ալ կարգով շարեցէ՛ք պզտիկեն մեծ։

2, 8, 41, 53, 64, 32, 16,
4, 88, 69, 78, 99, 7

Զ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Շաքար—շաքարներ
Քաքար—քաքարներ
Հաւկիթ—հաւկիթներ
Ընկուզ—ընկուզներ
Խնձոր—խնձորներ
Երես—երեսներ
Բերան—բերաններ

Շաքարն անուշ է։
Քաքարը եղով ու պիւրով կը շինուի. մէջը հաւկիթ ու պանիր կայ։
Շատ կը սիրե՞ս շաքարը։
Ընկուզն ու հաւկիթը կլոր են։
Ընկերիս երեսները կարմիր են։

ՊԱՌԱՒՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Անօթի գայլ մը որսի կը պատէր։ Գիւղի մը խրճիթին մօտէն լսեց որ երախայ մը կուլայ. իսկ մայրը կ'ըսէ.

—Եթէ ձայնդ չկտրես, քեզ գայլին կուտամ։

Գայլը՝ ա՛լ հեռու չգնայ և հոն կը սպասէր, որպէս զի մանուկը իրեն տան։ Գիշերը, վրայ հա-

սաւ. գայլը սրտատրոփ կը սպասէր և կը լսէր։ Պառաւը նորէն սկսեց.

—Մի՛ լար, որդեակ, ա՛լ քեզ գայլին չեմ տար. իսկ եթէ գայլը հոս գայ, կը սպաննենք։

Գայլը քիչ մը մտածեց և, առանց ժամանակ կորսնցնելու, գիւղէն հեռացաւ արագ արագ։

ԻՐԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Գտէ՛ք երկերկու անուն.

Ծաղիկի, միջատի, կենդանիի, շէնքի, պտուղի, հագուստի, թռչունի, քաղաքի։

ԳԱՐՆԱՆ ԳԱԼՈՒՍՏԸ

Բարի՛ եկար, աղնիւ գարուն,
Բարի՛ եկար, հաղա՛ր բարով.
Շատ կը սիրենք տեսքիդ սիրուն,
Քեզ կը տօնենք երգով պարով։

Թռչուն, ծաղիկ, ձոր ու անտառ,
Օ՜ն, միացէք մեր երգերուն,
Երգենք, գոչենք մենք անդադար,
Կեցցէ՛ գարուն, աղնի՛ւ գարուն։

ԱՌԱԾՆԵՐ

Անուշ լեզուն օձը ծակէն դուրս կը հանէ։
Ուշ բուսաւ, շուտ սորվեցաւ։
Կարկուտէն թրջեր եմ, անձրեւէն ի նչ վախնամ։
Պաղ երկաթ կը ծեծէ. (=Պարապ կ'աշխատի)։
Աղքատի հաց ուտողը չի կշտանար.
Ուզան բերանը կթան կով մը կ'արժէ։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ԶԱՅՆԸ

Կենդանիները կը հանեն այլ և այլ ձայներ որոնք տարբեր անուններ ունին։ Այսպէս՝ շունը կը հաչէ, քածը կը կաղկանձէ, ոչխարը կը մայէ, այծը կը պապաչէ, կովը կը բառաչէ, եզը կը փչէ, ձին կը վրնչէ, էշը կը գռայ, փիղը կը գոչէ, խոզը կը գանչէ, առիւծը կը մռնչէ, կատուն կը մլաւէ, վագրը կը խռնչէ, հաւը կը կարկաչէ, գորտը կը կռնչէ, արագիլը կը կափկափէ, աղաւնին կը ճչէ, օձը կը սուլէ, կոկորդիլոսը կ'աշխարէ, թութակը կը խօսի, արտոյտը կը գեղգեղէ, սոխակը կը դայլայլէ, ճնճղուկը կը ճռուոլէ, ճանճը՝ մեղուն և եղնակը կը բզզան։ Միայն մարդը իր միտքը կը յայտնէ խօսքով. ան միայն գիտէ իմաստ մը տալ իր հնած ձայներուն։

ԴԱՍԱՐԱՆԸ

Պզտիկ տղան դպրոց կուգայ որ կարդալ-գրել սորվի։

Դպրոցը պզտիկ տղոց սիրելի տեղ մ՚ է. հոն պիտի սորվի խօսիլ իր մայրենի լեզուն։

Իմ մայրենի լեզուս Հայերէնն է. նախ և առաջ ան պիտի սորվիմ, ետքը հաշիւ, պատմութիւն, աշխարհագրութիւն և ուրիշ բաներ։

Գծագրութիւնն ալ շատ կարեւոր է։

Երբ մեծնամ, աս ամէն սորված բաներս ինծի օգտակար պիտի ըլլան։

Բայց աս ուսումներէն աւելի պէտք է սորվիմ աղնիւ, բարի և պարկեշտ տղայ ըլլալ։

ԱՉՔԸ ԲԱՑ ԳՈՂԸ

Քահանան գող մը կը խոստովանցընէր, նոյն միջոցին խոստովանողը քահանային ժամացոյցը կամացուկ մը գողցաւ։

Տէրտէրը հարցուց.

«Գողութիւն ըրա՞ծ ես, որդեա՛կ, ըսէ՛ նայիմ ի՞նչ ես գողցեր։

—Ժամացոյց մը, տէ՛ր Հայր։

—Է՛յ, տար տիրոջը տուր։

—Չէ՛, դո՛ւն առ, տէր Հայր։

—Չէ՛, տիրոջը տալու ես։

—Տիրոջը տուի չառաւ, տէ՛ր պապա։

—Ուրեմն քեզի թող ըլլայ։

Է. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հայէն—Հայերէն,
Ժամէն—Ժամ . . . ,
Աչքէն—աչք . . . ,
Քիթէն—քիթ . . . ,
Թևէն—թև . . . ,
Ձեռքէն—ձեռք . . . ։

Ժամէն տուն կուգայ։
Աչքէն արցունք կը վազէ։
Քիթէն արիւն եկաւ։

Ձեռքէն բռնէ՛ որ չկնայ։
Կատուին ոտքէն մի՛ քաշեր։
Ո՞վ կուգայ ժամէն։ Ի՞նչ կը վա-
զէ աչքէն։ Արիւնը ո՞ւտկից եկաւ։
Ո՞վ կ'կնայ եթէ ձեռքէն չբռնես։

ԻՐԱԶՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Պատասխանեցէք սա հարցումներուն.

1. Ի՞նչ է կատուն։
2. Ո՞ւր կ'ապրի։
3. Ի՞նչ կ'ուտէ։
4. Քանի՞ մասէ կազմուած է կատուին մարմինը։
5. Որո՞նք են այդ մասերը։
6. Մորթը ի՞նչպէս է։
7. Աչքերը ի՞նչպէս կրնան ըլլալ։
8. Մարմինին եռեւը ի՞նչ ունի։
9. Քանի՞ ոտք ունի։
10. Թաթերուն ծայրը ի՞նչ ունի։ Ի՞նչ կ'ընէ անով։
11. Կատուն կը հաչէ՞։ — Հապա ի՞նչ կ'ընէ։
12. Ի՞նչպէս է իր բնաւորութիւնը։

ՏՂՈՑ ԽԱՂԵՐ

Պզտիկ տղաք շատ տեսակ խաղեր գիտեն։

Շռնչան և շրջանակ կը դարձընեն և հաճոյքով կը վազվզեն։ Գնտակ կը նետեն։

Քանի մը տղաք մէկտեղ եկած՝ քով քովի, ձեռք ձեռքի կը պարեն խնդալով։

Մեծ թէ պզտիկ ուրախ են։

Պզտիկները կարգով կ'անցնին մեծերուն թեւին տակէն, մէկիկ կը ծռին և ամէնքն ալ իրարու ետեւէ կը դառնան։

Ներքեւն ծափիկ կը խաղան։

Պահուրտուկն ալ շատ հաճելի է։

Աւելի մեծերը կրնան հասեւառիկ խաղալ։

Պզտիկ աղջիկները փոքրիկ տիկիններ կամ խամաճիկներ կ'ունենան։

Խամաճիկին կ'ըսեն նաև պուպրիկ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Անծակ մարգարիտ,
Անոլոր դերձան.
Ասուած կը շարէ,
Մարդը կը քաշէ։

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Մանչ տղաքը կը հագնին	Աղջիկները կը հագնին
Տափատ	Շրջազգեստ
Բաճկոն	Կիսազգեստ
Թիկնոց	Թիկնոց
Վերարկու	Վերարկու
Կրկնոց	Կրկնոց

Տղաք ֆէս կը դրծածեն կամ գլխարկ։ Ֆէսը կը չինուի կարմիր կամ մութ-կարմիր գոյնովներ-կուած բուրդէ որ տաք կաղապարի վրայ կլոր ձև մը կ'առնէ՝ գլխու յարմար։ Նոյնպէս խսիրէ կամ թաղիքէ չինուած գըլխարկ կը դնեն, լայն եզերքով, որ արեւէն կը պահպանէ դէմքը։

Տղաք ամէն օր կը սանտրուին։ Իրենց մազը շատ կարճ կը կտրուի և կամ մինչև ծոծրակը դանդուր կը ձգուի։

Տեղ տեղ խսիրէ կամ կերպասէ չինուած գըլխարկ կը դնեն՝ վրան ժապաւէն կամ փետուր կամ ծաղիկներ։

Ուրիշ տեղեր, պզտիկ աղջիկները բաց գլխով կը պտտին, կամ բարակ կըտաւէ չինուած նախշուն եազմա կը կրեն։ Երբեմն ալ ոսկի ու արծաթ զարդեր կը կախեն։

Աղջիկներուն մազը չեն կտրեր, երկայն կը ձգեն, երբեմն ալ ծամ կը հիւսեն։

Թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղաք կը հագնին գուլպայ, կօշիկ, ոտից, սանդալ (նաղրն), լաստիկ, և ուրիշ ոտնամաններ։

Գաւառները ոտնամաններուն կուտան այլ և այլ անուններ, ոտից, մուճակ, շըփշըփ, մէստ, փապուճ, թէրլիկ, փոստալ, և այլն։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Սրբուհի իր մայրիկին հետ այցելութեան կ'երթայ աղգականի մը պարտէզը։

Աղգականը քանի մը հատ գեղեցիկ տանձ կը լեցընէ կողովի մը մէջ և Սրբուհիին կուտայ։

Ճամբան ծոյլ Սրբուհի ուզեց մայրիկին տալ կողովը։

«Սակայն, գիտե՞ս, երբ կողովը ես տանիմ, տանձերը ուտելու իրաւունքն ալ իմն կ'ըլլայ։

—Ինչէ՞ն, մայրիկ, կ'ըսէ Սրբուհի, տանձի ծառն ալ այնչափ տանձ կը կրէ, բայց հատ մ'ալ չ'ուտեր։

ԴՊՐՈՑ

Ի՞նչ աղուոր է դպրոց երթալ՝
Խաղալ, երգել, գրրել, կարդալ։
Դեռ պըզտիկ եմ, բայց շարունակ
Դաս սորվելու ունիմ փափաք։

Բան չեմ գիտեր այսօր՝ իրա՛ւ՝
Բայց Վարժուհիս ա՛յնպէս մ'ըրաւ՝
Դասըս ա՛յնպէս մը հասկըցուց
Որ կ'ըմբռնեմ զայն հիմակուց։

Ա՛ն աղ նրման է մայրիկիս,
Կը խրատէ, կը կրրթէ զիս.
Կ'ուզեմ մոր պէս սիրել զինքն աղ,
Տրուած դասերը չը մոռնալ։

Ը. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հացով կը կշտանանք
Գինիով կը գինովնանք
Աչքով կը տեսնենք
Բերնով կը ճաշակենք
Ձեռքով կը բռնենք
Ոտքով կը քալենք
Ականջով կը լսենք
Քիթով հոտ կ'առնենք։

Ըսէ տեսնեմ, Մա՛ռի, ի՞նչով կը կշտանաս։

Ի՞նչով կը տեսնես։

Ի՞նչով հաց կ'ուտես։

Ի՞նչով կը հոտուրտաս։

—Ձե՞ս գիտեր, Նունիկ, աղուոր ծաղիկը քիթով կը հոտուրտամ։ Թրմբուկին ձայնը ականջով կը լսեմ։ Ցորթունքներովս կը պաղնեմ մեր պէպէքին երեսները։ Բերանովս կը ճաշակեմ, համ կ'առնեմ, կ'ուտեմ։ Աչքերովս կը տեսնեմ ամէն բան։ Մատերովս կը շօշափեմ առարկաները։

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—Մեր էգին տանձի ծառ մը կայ, տանձի ծառին ծայրը ծանր տանձ մը կայ. ո՞ւր է մեր էգին, ո՞ւր մեր տանձի ծառը, ո՞ւր է մեր տանձի ծառին ծայրի ծանր տանձը։

—Ջուխտակ մը տրեխ ջուրը դրի որ թրջի, կը թրջի, թո՛ղ թրջի. չէ՛, չի թրջիր, թող չթրջի։

ՔԱՂԱՔԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Սթամպոլ, Պրուսա, Իզմիր, Ամասիա, Մուշ, Մարսուան, Սէլանիկ, Էրզրում, Այտըն, Պիթլիս, Պաղտատ, Երուսաղէմ, Աղէքսանդրիա, Եաֆա, Մէրսին, Ատանա, Հալէպ, Ակ, Էնկիւրիւ, Արաբկեր, Բալու, Գօնիա, Մարաշ, Թարսուս, Թէքիրտաղ, Խարբերդ, Կիրասոն, Կիւրին, Հաճըն, Մալաթիա, Մալկարա, Ուրֆա, Զմիկէծէք, Պանտրմա, Պարտիզակ, Սամսոն, Սղերդ, Վան, Տիարպէքիր, Տրապիզոն։

ԵՐԱԽԱՆԵՐ ՈՒ ԳՈՐՏԵՐ

Երախաները կը խաղային լճակի մը մօտ։ Ցանկարծ տեսան, որ ջուրին մէջ գորտեր կան։ Անոնք քար հաւաքեցին և մէկ մէկ սկսան քարկոծել գորտերը։ Երախաները սաստիկ կ'ուրախանային։

Գորտ մը ջուրէն գլուխը դուրս հանելով ըսաւ։

—Ա՛լ քար մի՛ նետէք, տղաք, ատիկա ձեզի համար խաղ է, բայց մեզի համար մահ է։

ԳՈՒԹԱՆ

Գուլթանը երկրագործական գործիք է որ կը լծուի, սովորաբար, ուլթը զոյգ գոմէշներէ ու եզներէ։ Ունի ուլթը տուն. 1. Հօրեվօր, 2. Փոչետուն, 3. Խարշնտու, 4. Խնձորտուն, 5. Ուժտուն, 6. Մկնտուն, 7. Մարգլտուն և 8. Ամոլ։

Երկրագործը երդեր հիւսած է գուլթանի վրայ։

ՍՐԱԽՕՍ ԱՇԿԵՐՏ ՄԸ

Խանութպան մը իր աշկերտին կը բարկանայ։

— Տղա՛յ, քեզ կը ծեծեմ։
— Դո՛ւն գիտես։
— Տղա՛յ, քեզ սիւնը կը կապեմ։
— Վա՛ղպետ. դո՛ւն գիտես։
— Տղա՛յ, քեզ կը սպաննեմ։
— Դո՛ւն գիտես։
— Զվախչիս։
— Ա՛ռ ալ ե՛ս գիտեմ։

ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանաչ ոտքով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով,
Թէեւ տունկս է փոքրիկ ու ցած,
Աբօտներուն մէջ պահուրտած՝
Բայց իմ փունջս՝ մէջ ամէն տան՝
Թէ՛ աղքատի, թէ՛ մեծատան,

Իբրեւ գարնան առաջին զարդ
Կրնայ տեսնել ամենայն մարդ.
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունս է հեզ մանուշակ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ է մանիշակը. — Ի՞նչ գոյն ունի. — Ուրիշ ծաղիկներ ալ տեսա՞ծ կ՞. — Ո՞ւր կը բուսնի մանիշակը. — Իսկ ցորե՞նը ուր կը բուսնի։

Ի՞նչ կ՚ըսուի բոյսին այն մասը որ հողին տակն է։ Իսկ հողէն դուրս եղող մա՞սը։ Որո՞նք են ծառի մը մասերը։

ԴԱ՞Ր ԹԷ ԿՈՃԱՏ

(Չի՞փք մի թէք)

Մեծ ու պզտիկ տղաքներ՝ մանչ և աղջիկ՝ հաւաքուեր էին դար և կոճատ խաղալու։ Ամէնուն ալ դրպանը լեցուն էր գլուկով(*)։ Ամէնէն մեծ աղջիկը բուռին մէջ կը պահէր գլուկը և պզտիկներուն կը հարցնէր.

— Դա՞ր (չի՞փք) թէ կոճատ (թէք)։

Եւ այսպէս ամէնն ալ կը ծիծաղէին ու կը զուարճանային։

Կան պզտիկ երախաներ, որ այդ խաղը չեն գիտեր և շատ անգամ կը խառնուին մեծերուն խաղին։ Պզտիկ Լեւոնն ալ այսպէս ըրաւ և միացաւ իր քոյրերուն. կ՚ուզէր ինք ալ սորվիլ այդ խաղը։ Երբ մեծ քոյրը անոր կը հարցնէր, «Դա՞ր թէ կոճատ», Լեւոն այնքան պզտիկ էր որ չէր կրնար խօսիլ, միայն քանի մը բառ կը թոթովէր։

(*) Գլուկ կամ սիսառուկ = լէպլէպի։

Միւս երախաները կը հետեւէին խաղին և հետաքրքիր էին գիտնալու թէ Լեւոնիկը ի՞նչ կ'ընէ՝ կը յաղթէ՞ թէ կը յաղթուի։ Իսկ պղտիկը՝ բերանը բաց՝ կը ծիծաղէր շարունակ . . . ։

Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՄ

Ես պղտիկ տղայ եմ, ամէն բանէ առաջ խաղալ խնդալ կ'ուզեմ։ Հանդարտ նստիլ չեմ սիրեր, կ'երթամ, կուգամ, կը վազեմ, կը ցատքեմ, կը շարժիմ, և այս ամէնը ինծի համար շատ օգտակար է։

Հանդարտ նստող տղան հիւանդ է։

«Ես կ'ուզեմ հանդարտ չնստիլ» — կը մտածէ հիմա պղտիկ Արմենէն։

— Այ՛, Արմենէ, հանդարտ մի՛ կենար, երբ դասերդ սորված ես։ Բայց նայէ՛ որ քու խաղերովդ ուրիշին գլուխը չցաւցընես։ Պարտէզ իջիր, վազէ, խաղա՝ երբ զբօսանքի ատեն է։ Հիմա դաս պիտի սորվինք ամէնքս ալ. հիմա լուռ կենալու ատեն է։ Դո՛ւն ալ աշխատէ, թո՛ղ որ ուրիշներն ալ դաս սորվին։

ՀԱՆԵԼՈՒԿ

Փուշեր ունի բայց վարդ չէ.
Միշտ կը խաղայ գը՝արթ չէ.
Բերան ունի չունի ձայն
Ջուրի խենթ է ի՞նչ է այն։

ԱՍՏԻԿ

Աստիկ գրիչ ու գիրք կ'ատէր
Եւ դպրոցէն կուտար փախուստ.
Ան կ'ըսէր միշտ. «պրպտիկ եմ դեռ,
Մեծնամ, կարդամ, կ'ըլլամ հարուստ»։

Աստիկ մեծցաւ, բայց տակաւին
Ո՛չ կը գրէր, ո՛չ կը կարդար.
Մարդիկ անոր յարգ չը տալին
Ա՛յս է ծոյլին պատիժն արդար։

ՊԱՌԱՒՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Պառաւը ունէր այծ մը որուն կաթը կթած ու պահած էր մառանը։ Կատուն գաղտուկ մը եկաւ կաթը լակեց։ Պառաւը վրայ հասնելով բռնեց գողը և անոր պոչը կտրեց՝ իր քովը պատանդ պահեց, մինչեւ որ երկայ կաթը բերէ։

Կատուն գիտեց այծին՝ որ կաթ տայ իրեն. այծը ղրկեց ղանիկա ծառին՝ որ ցախ բերէ իրեն. ծառը ղրկեց ղանիկա ջրպանին որ ջուր բերէ իրեն։ Ջրպանը ուզեց ղայդ մը կոշիկ, և ղրկեց զինք կոշկակարին։ Կոշկակարը ուզեց հաւկիթ և զինք ղրկեց հաւին, հաւը ուզեց կուտ, և կատուն ղրկեց կալը։

Ասանկով կատուն շատ տեղեր գիտեց, շատ յոգնեցաւ աշխատեցաւ մինչեւ որ ամէնուն ուզածը գտաւ բերաւ։ Ան ատեն պառաւին առջեւ եկաւ ու իր պոչը աղատեց։

Ո՞Ւ Ր Ե Ն

Այդինները և պարտէզները տուներուն մօտ կ'ըլլան։



Թռչունները բոյն կը շինեն ծառերուն վրայ և տուներուն վրայ, ցիւերուն կամ տանիքներուն ծայրերը։

Ջուկերը կ'ապրին ծովերուն ու գետերուն մէջ։



Մուկերը կը պահուըտին տուներու մէջ, պատերուն ծակերը, ու երբ մարդ չտեսնեն, դուրս կ'ելլեն ուտելիք գտնելու համար։



Հաւերը կը թառին բոյնի մէջ, ու հոն կ'ածեն հաւկիթ։

Նաւերը ծովին վրայ կը ճամբորդեն և հեռու քաղաքներէ կը բերեն ճամբորդ և վաճառք։

Նաւերուն կեցած տեղն է նաւահանգիստ՝ ծովեզերքէն քիչ մը հեռու։

Ծառերը կը բուսնին պարտէզներու մէջ, կամ լեռներն ու անտառները։

ՇՈՒՇԱՆԻԿ ՈՒ ԻՐ ՀԱՒԵՐԸ

Շուշանիկ աքաղաղ մը և հաւ մը ունէր։

Հաւը կը կոկտար, կը կրկռար։

Շուշանիկ ամէն առտու կուտ կը ցանէր անոնց առջեւ։

Հաւը ամէն օր հաւկիթ կ'ածէր և Շուշանիկ կ'ուրախանար՝ բոյնին անկիւնէն հաւկիթը դուրս հանելով և կը տանէր իր մօրը կուտար։

Օր մ'ալ հաւը թխսեց, քանի մը ձագեր հանեց՝ որոնք իրենց մօր թեւին տակ կը մեծնային, անոր հետ կ'երթային կեր փնտռելու, գարիի հատիկ մը, պզտիկ որդ մը։

Վառեկները կամաց կամաց մեծցան, կլու կլու ընելով ժուռ կուգային բակին մէջ և Շուշանիկ կը պահպաներ զանոնք որպէս զի չկորսուին։

ԱՆՈՒՆՆԵՐ

Իրմիր գեղեցիկ քաղաք է.

Պալքան բարձր լեռ է։

Վոսփորի նեղուցը Մարմարան. Սեւ ծովէն կը գատէ։

Քիսոը Աբրիպեղագոսի մէջ կղզի է.

Սաքարիա գետը երկու ճիւղ ունի որոնք կը միանան Էսկիշէհիրի մօտ։

Ճիհան գետը Միջերկրական ծովը կը թափի։

Մեր երկրին բերքերն են. ցորեն, կորեկ, գարի, խաղող, նարինջ, թուզ, նուշ, կեռաս, դեղձ, ձէթ, ծխախոտ, աֆիոն, բամբակ, բուրդ, կանեփ, տորոն, շուշմա, գխտոր, մետաքս, եայլն,

Մենք ամէն գարնան շերամ կը պահենք, թութի տերեւով կը սնուցանենք։ Որդը խոզակ շինելով մէջը կը պահուի։ Յետոյ դուրս կ'ելլէ և թիթեռ կ'ելլայ, նորէն հաւկիթ կ'ածէ։

ԶԱՐԱՃՃԻ ՄԱՐՏԻԿ

Մարտիկ չարաճճի տղայ էր. միշտ, առանց մտածելու, մոքէն անցածը կ'ընէր։

Անցած օր պզտիկ սայլակ մը գտաւ և կապով քաշել սկսաւ։

Քրոջը Զապէլին ըսաւ, «Եկո՛ւր, մէջը նստէ, քեզ քաշեմ։ Մի՛ վախնար, քեզ չեմ ձգեր»։

Զապէլ նստաւ սայլակին վրայ, և Մարտիկ, անանկ ուժով քաշեց որ քոյրը սկսաւ վախէն պոռչտալ։

Յանկարծ, սայլակը կոճղի մը դարնուեցաւ՝ այնչափ սաստիկ ոչ, Զապէլ գետին տապալեցաւ և քիթն արիւնեցաւ։

Շատ դժուար կրցան կեցընել արիւնը, և Զապէլ մէկ երկու օր հիւանդ մնաց։

Արդեօք Մարտիկին պէս տղաք կա՞ն ձեր մէջ։

ԱՌԱԾՆԵՐ

1. Ածան հաւը կարգճան կ'ըլլայ.
2. Աղէկ օրիդ երեսդ խնդացող շատ կ'ըլլայ.
3. Ամէն մարդ իրենը դիտէ, տէրտէրը ամէնունը.
4. Մէկ ծաղիկով գարուն չի գար.
5. Գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ։
6. Ես աղա, դուն աղա, ալիւրը ով աղայ։
7. Կալին մէջ աշխատող եզին դունջը չեն կապեր։
8. Կուժը ջուրին ճամբան կը կոտրի։

Ո՞Ւ Ր

Ո՞ւր են նաւերը
» հաւերը
» ծառերը
» բառերը
» մուկերը
» ծակերը
» բոյները
» յոյները
» այգիները
» հայ կիները
Ո՞ւր կ'եղլէ շոգին
Ո՞ւր կ'երթայ հոգին:

ԹԱՂՈՒԱԾ ՄՈՅԿԸ

Գեղացի մը հողը փորած ատեն, մոյկ (= ճիզմէ) մը կը գտնէ, երկար վիճելէ ետք իր ընկերոջ հետ, կ'երթայ գեղին ալեհեր ծերուկին՝ հասկնալու համար թէ ի՞նչ է գտնուածը։ Ծերը տեսնելուն պէս կը ծիծաղի անոր միամտութեան վրայ։ «Կացինի ամա՞ն ալ չես ճանչնար, տգէ՛տ», կ'ըսէ։

ԳՈՄԷՇԸ ԲԱՄՊԱԿԷՆ ՀԱՆԵԼ

Բամպակի արտին մէջ գոմէշը մտնելով կ'արածէր. տէրը տեսնելով կ'երթայ արտէն հանելու։ Բայց ի՞նչպէս հանէ որ գոմէշը բամպակի բոյսերը չկոխկռտէ։ Գեղացիները կը հաւաքուին և խելայոյզ մարդու մը խորհրդով, ոտուընները պարան կապելով գետին կը ձգեն ու դուրս կը քաշեն։

ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԵՐԸ

Առարկաներու խումբերը այլ և այլ անուններով կ'որոշուին, այսպէս. դէզ մը խոտ, բոյլ մը ախթար, հոյլ մը ծաղիկ, պրակ մը թուղթ, տրցակ մը բանալի, կապոց մը մանած, խուրձ մը հասկ, ծրար մը կոտաւ, կարգ մը աշակերտ, բեռ մը փայտ, կոյտ մը հող. — Նոյնպէս կ'ըսուի. Ջեռք մը հագուստ, փունջ մը ծաղիկ, հատոր մը գիրք, գլուխ մը սոխ, լոհ մը սապոն. ափ մը չամիչ, պտղունց մը աղ, փերթ մը չուխա, կոմ մը ապուխտ, պճեղ մը սխտոր, շերտ մը հաց, ողկոյզ մը խաղող, ծալ մը պաստեխ, հակ մը բամպակ։

— Ամէն բանի մէջ կարգ կանոն պահենք։

Ի՞ՆՉ Է ՀՐԵՇՏԱԿԸ

Պողոս՝ զոց ըրած արդեն իր հաւատ՝
Աւազին վրայ նստեր կը խաղար:
Քովն էր մեծ մայրը՝ ձեռքին մէջ Սաղմոս
Ակնոցն աչ աչքն՝ կը կարդար անիւս:
Յանկարծ պատանին վազեց անոր քով
Ու վիզը ցատքեց: Հանին զարմանքով
«Անուա՛կ, բո՛ղ տուր օձիքս, աղ հերի՞ք:
— Նստ դաւ, բայց խնդրեմ, ըսէ՛, մեծ–մայրիկ,
Հրեշտակ որ կ'ըսեն՝ ի՞նչ տեսակ բան մ'է,
Մե՞ծ է, պզտի՞կ է՝ կ'աղաչեմ պատմէ՛»
Հանին սիրալիր նայուածքով մ'անհուն
Ըսաւ. «Հրեշտա՞կը դո՞ւն ես ահա, դո՞ւն»:

(ՆՈՐ ԴՊՐՈՑ, Է. Պրակ, էջ 60)

ԴՐԱՄՆԵՐ

Հայ, պանիր, պտուղ, և ուրիշ բաներ գնելու համար դրամի պէտք ունիմ:

Մանրավաճառէն քարէ դրիչ մը պիտի գնեմ: տասը փարա տալու եմ:

Թուղթի պիտի չենեմ: գունաւոր թուղթ պէտք է: Մանրավաճառին կ'երթամ: տասնոցը կը վճարեմ: ան ալ ինծի 3—4 թերթ թուղթ կուտայ:

Տասնոցը պզտիկ, տափակ մետաղի կտոր մ'է, որուն մէկ կողմը տաճկերէն դիր կայ, միւս կողմն ալ թուղթ ըսուած նշանը կոխուած է:

Զորս տասնոցը կ'ընէ քառասուն փարա կամ մէկ դրուշ որ արծաթ դրամ է:

Քառորդ մէճիտիէն 5 հատ դրուշ է:

Զորս քառորդը մէկ մէճիտիէ է:

Հինգ մէճիտիէ և 8 դրուշը 1 օսմանեան ոսկի է, որ ղիրա կ'ըսուի:

Կայ՝ կէս եւ քառորդ ոսկի: Կէս ոսկին 5½ դրշ. է: Քառորդ ոսկին 27 դրուշ է:

Ասոնց ամէնուն վրայ աղ դէր և թուղթ տրպուած է:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ո՞վ է մեծ մարդը
Ի՞նչ է մակարդը.
Տեսե՞ր ես վարդը.
Ի՞նչ է գեղարդը.
Թանկագին զարդը.
Ո՞վ է զբաղթը.
Ի՞նչ է սուր կարթը.
Տեսա՞ր եղուարդը.
Ո՞ր է նուարդը:

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Կան բառեր որ իրարու հակառակ իմաստ ունին, ինչպէս. — փափուկ ու կարծր, տաք ու պաղ, դոց ու բաց, շատ ու քիչ, երկայն ու կարճ, արագ ու դանդաղ, հռայլ ու ժլատ, բարձր ու ցած, լայն ու նեղ, մեծ ու պզտիկ, հատ ու բարակ, թանձր ու նօսր, թեթեւ ու ծանր, ծածուկ ու յայտնի, գէշ ու լաւ, պարապ ու լեցուն, խօսուն ու մունջ, հասուն ու խակ, ագեղ ու գեղեցիկ, ցանցառ ու խիտ, և այլն:

ՊԷՏՔ Է ԱՇԽԱՏԻՆՔ

Զորս դիս կը նայիմ, ամէնքն ալ կ'աշխատին՝ մարդն ալ կենդանիներն ալ։ Կը գործեն, կ'երթան, կուգան։ Թռչունը ծղօտ կը հաւաքէ՝ իր ձագերուն բոյն շինելու համար։

Մրջիւնն անգամ գործ ունի և իրեն համար կերակուր կը դանէ։

Պարապ չի՛ նստուիր, անդործ մնալով մարդ կը ձանձրանայ, սիրտը կը նեղուի։ Ալարիլը (իշեանմէ) դէշ բան է, ժիր ըլլալու է։ Ծոյլ ու ալարկոտ մարդիկը չեն հասկնար թէ ի՞նչ ըսել է ժիրութիւն։ Աշխատողը օգտակար կ'ըլլայ, հարուստ ու առողջ կ'ըլլայ. ասոր հակառակ՝ ո՛վ որ չ'աշխատիր, անօգուտ է, ուրիշներուն բե՛ռ է։

ԽԱՆՈՒԹՊԱՆԸ ԵՒ ՃԱՄԲՈՐԴԸ

Պետիկենց Աստուրը իրենց գիւղէն ճամբայ ելաւ ձիով մօտի քաղաքն երթալու համար։

Կէս ճամբան գիւղ մը կը հանդիպի՝ գիշերը հոն անցընելու. խանութպանի մը կ'երթայ կ'աղաչէ որ իր ձին դոմը տանին, դարի կերցընեն և եռքը հաշիւը իրեն ներկայացընեն։

Ձիուն կեր կուտան, կը կշտացընեն։

Միւս առտու, Աստուրը կը պատրաստուի ճամբան շարունակելու. խանութպանին կ'երթայ՝ հաշիւը վճարելու և ձին ուզելու։

—Ի՞նչ ձի, ի՞նչպէս ձի, դուն ոտքո՛վ եկած ըլլալու ես, մեր քով ձի չկայ, խելքդ գլուխդ բեր, եթէ ոչ . . . կ'ըսէ խանութպանը։

—Ձիս բերէ՛ք, կ'ըսեմ, եթէ ոչ՝ ե՛ս ալ հօրս ըրածը կ'ընեմ։

—Ես ալ քեզի կ'ըսեմ որ դուն ոտքով ես եկեր, ի՞նչ ձի կը փնտռես, կը կրկնէ խանութպանը։

—Նորէն կ'ըսեմ, բարեկամ, ձիս բերէ՛ք, չէ նե հօրս պէս կ'ընեմ։

Խանութպանը կրկին լսելով այս սպառնալիքը՝ /սկսաւ ձին կը բերէ, վախնալով որ գլխուն փորձանք մը կուգայ։ Ձին տիրոջը յանձնելէն ետքը կը հարցընէ. —Բու հայրդ ի՞նչ է ըրեր։

Աստուրը կը պատասխանէ.

—Օր մը իմ հօրս ալ ասանկ բան մը պատահեր է, ա՛ն ալ՝ ճարը հատնելով՝ պայուսակը կռնակն առեր՝ ոտքով ճամբան շարունակեր է . . .։

ԳԻՐ

Գիրքիս մէջ իրարու քով շարուած են պզտիկ՝ սև նշաններ. ասոնք գիր են։

Ս. Մեսրոպ գտած է Հայերէն այբուբենի գիրերը որոնք 39 հատ են։

Ձեռքով ալ գիր կը գրուի, բայց ոչ թէ գիրքին մէջի գիրերուն պէս։

Գրելու համար պէտք է թուղթ և երկաթ գրիչ զոր կոթի մը վրայ կ'անցընեմ։ Պէտք է նաև մելան։ Մելանը սև, կապոյտ կամ կարմիր հեղուկ է։

Ձեռքովս գրելու համար վարժապետս օրինակ կուտայ, այսպէս.

ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

(Տողին վրայ կը գրուին)

ա ռ ա ջ ա օ ջ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերը վերի օրինակին գիրերով գրեցէք քառեսախտակին վրայ կամ գրավարժութեան տետրակին մէջ՝ մատիտով (*)։

Ա՛ս, սա, առ, աւ, ան, նա, նաւ, աւան, սաւան, նու, ուս, ուռ, նուռ, ռուս, սառ, առաւ, առու, առասան, անուն, անանուն, ասուն, անասուն։

(*) Աւելի օգտակար կ՚ըլլայ որ ուսուցիչը նոյնութեամբ գրէ վերի օրինակը՝ սեւ տախտակին վրայ՝ ցոյց տալով ձեռքի շարժումները։

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Անգամ մը մեղուն հարցուց իր տիրոջը.

«Կենդանիներէն ո՞րն է ամէնէն օգտակարը։

— Գիտե՛մ, դուն կը կարծես թէ ամէնէն օգտակարը դո՛ւն ես, բայց կը սխալիս։ պատասխանեց տէրը։

— Ի՞նչպէս, տէ՛ր իմ, ո՞րն է այն կենդանին որ ինձմէ աւելի օգտակար է։

— Ոչխա՛րը։

— Ատիկայ ճիշդ հաշիւ չէ, տէ՛ր, ոչխարը իմ հասակակիցս չէ։ Անիկա ահագին կենդանի մըն է, մինչ ես միջատ մըն եմ։ Զիս իմ ընկերներուս հետ համեմատելու է։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

(Տողէն վեր կը գրուին)

/// ֆ ժ ջ հ ձ ղ ճ ռ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետեւեալ բառերը օրինակեցէք քառեսախտակի վրայ կամ տետրակի մէջ՝ մատիտով։

ժամ, ժաժ, ծամ, մամ, մոմ, համ, մաճ, ճամ, ժուռ, ծառ, ծուծ, նուռ, անուն, համանուն, հուն, նաև, ճառ, աճառ, օճառ, ուսում, անուս, անծամ, անհամ, անճառ։

— Շատ բարի։ Շերամը քեզի նման փոքր է, բայց քեզմէ աւելի օգուտ կուտայ։

— Ո՞րն է շերամը։

— Շերամը այն խմաստուն որդն է որ մեզի համար անոնման քնքուշ մետաքս կը հիւսէ։

— Հա՛, հասկցայ։ Այդ ան շատակեր ճիճին չէ՞ որ անդադար կը կերակրուի թութի տերեւով։

— Նա ինքն է։

— Բայց գիտէ՞ք, տէր, անոր չափ եթէ մեզ ալ կերակրէք, մենք մեղրի փոխարէն ոսկի կը պատրաստենք ձեզի համար։ Դուք ո՛չ մէկ կենդանի ունիք որ իր կերակուրը մեզի նման ինքը պատրաստէ և անկէ ուրիշներու ալ բաժին հանէ։ Այնպէս չէ՞, պարոն։

ԵՐՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

(Տողէն վար կը գրուին)

Պ Բ Գ Դ Յ Յ Լ Ղ Շ Շ Շ Հ Ջ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Օրինակեցէք հետեւեալ բառերը.

Ցոյն, յոյս, լոյս, ցոյց, արոյր, արտոյտ, առուոյտ, արօր, արօտ; նարօտ, ցաւ, պար, պապ, պատ, պարապ, պարտէզ, պառաւ, լալ, շալ, պապ, շաղ, շատ, չար, լար, տար, դար, ղղալ, ղուր, պոչ, ջոջ, տատ, աղօտ, տղայ, արդար, շղարշ, ջուր, ջրպան, ջրհոր, հաւասար, տաւար, տառ, արտ, մարդ, մարտ, պայտ, ցայտ, ջրատուն։

ՏՆԱԿԱՆ ՊԷՏՔԵՐ

Մեր տան համար շատ մը բաներ կը գնէ հայրը։ Ինք կ'աշխատի որ մեր տան մէջ բան մը պակաս չըլլայ. ան կը վաստկի, մենք կը վայելենք։ Ան կը հոգայ մեր սնունդը՝ հայ, միս կաթ, եղ, պանիր, հաւկիթ, սուրճ, շաքար, թէյ, գինի և ուրիշ ուտելիքներ։

Ամառը կ'երթանք այգի. հոն՝ ծառերուն վրայ կախուած են տանձ, խնձոր, դեղձ, ծիրան, սալոր, թուզ, թութ, խաղող։ Ասոնց ամէնքն ալ մեր պարտէզներուն բերքն են։

Արտեր ալ ունինք ուր կը բուսնին ցորեն, գարի, կորեկ, վարսակ և ուրիշ արմտիքներ։

ՉՈՐՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

(Տողէն վեր եւ վար)

Բ Գ Դ Թ Ի Խ Կ Ձ Վ Փ Ֆ Ք

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Օրինակեցէք հետեւեալ բառերը:

Բիբ, բիր, գիր, թեփ, փեթակ, թերթ, քար, քաքար, շաքար, փափաք, պապակ, փետուր, խխում, խաղախորդ, ձաւար, ձագար, խնձոր, խունկ, ծունկ, սունկ, ցիր։

Ագաւնի, Բրաբիոն, Գոհարիկ, Դոմնի, Երանուհի, Զարուհի, թագուհի, Իզարեր, Լուսաբեր, Խնկենի, Կատարինէ, Հռիփսիմէ, Ղամբէուհի, Մաքրինէ, Ցուստիանէ, Նունիկ, Շահածուկ, Ոգուհի, Պէտրոս, Սրբուհի, Վարդուհի, Տիրուհի, Ցոլինէ, Փերբոնէ, Քրիստինէ, Ֆիլօր։

Մեր տունին քով է բանջարանոցը. գարնան եղանակին, մենք կը ցանենք տան համար պէտք եղած բանջարեղէններն ու ընդեղէնները. լուբիա, սիսեռ, սպանախ, ճակնդեղ, անուխ, ռահան, սամիթ, շողգամ, ստեպղին, դդում, սոխ, սխտոր, աղատքեղ, և այլն։

Այս ամէնը դուրսէն գնելու պէտք չունինք։

Բայց մեր հաղուստին համար հայրս կը գնէ տպածոյ (չիթ), ամերիքան կտաւ, խասա, մատամբօր, ֆանէլա, չուխայ, դոլպայ, և այլն։ Մայրս կը կարէ մեր հաղուստները, ինչու որ դպրոցէն սորված է ձեւել ու կարել։

ԴԳԱԼ—ՓՈԽ

Ամառ էր։ Հունձքի ժամանակն էր։

Մաշկերայի մը եւ Արաբկերցի մը միասին հունձք կ'ընէին։

Ճաշի ատեն անոնց մածուն բերին՝ մեծ ամանով մը։

Բայց երկու դգալի տեղ, մէկ հատ դրած էին։

Հայը բրդեցին մածունին մէջ։ Արաբկերցին ըսաւ.

—Դգալը մէկ հատ է, եկուր դգալ-փոխ ընենք։

Մաշկերային չհաւանեցաւ ու ըսաւ.

— Զդէ որ ես դգալով ուտեմ, դուն ձեռքով կեր։

— Զէ, ըսաւ Արաբկերցին, քանի որ դգալ-փոխ ուտել չես ուզեր, եկո՛ւր բան մը ըսեմ՝ անանկ ընենք։ Մեզմէ ո՛վ որ վրայէ վրայ եօթը գեղի անուն տայ՝ շուտ շուտ՝ դգալով ա՛ն թող ուտէ։

—Լա՛ւ, առաջ ես կ'ըսեմ։ և Մաշկերային սկսաւ.

«Մաշկերա, Ծագ, Ծագ, . . . Ծագ, . . .»։

Սկսաւ կմկմալ ու միայն երկու անուն տուաւ, ան ալ շուտ չկրցաւ ըսել ու ձայնը վար քաշեց։

Ան ատեն Արաբկերցին սկսաւ ու իրարու ետեւէ կարկուտի պէս թափեց.

«Մաշկերա ու Բենկայ
Ծագ ու Արակայ,
Եաքն ալ Զիմառայ
Կաշօ, Մուշաղկայ՝
Տո՛ւր դգալն որ դայ»։

Ըսաւ ու դգալն առնելով Մաշկերայիին ձեռքէն՝ սկսաւ մածունը լցնել։ Մաշկերայիին բերանը բաց մնաց, բայց ի՞նչ կրնար ընել, քանի որ խաղը կորսնցուցեր էր։

ԿԱՂԱՆԴ

Տարին երեք հարիւր վեթսունըհինգ օր է։

Տարեգլուխը կամ տարիին առաջին օրը Կաղանդ կ'ըսուի։

Ան օրը ամէն մարդ ուրախ զուարթ է. էն շատ՝ պզտիկ տղաքը ուրախ են. իրենց վարժապետէն ու ծնողքէն նուէրներ կ'առնեն։

Առջի իրիկուընէ, տուներուն մէջ կը պատրաստուի Կաղանդի սեղան՝ պտուղներով ու միրգերով լեցուն։ Սեղանին շուրջը կը բոլորուին պապն ու հայրը, մամն ու մայրը, եղբայրներն ու քոյրերը. ուրախութիւն կ'ընեն, խաղ կը կանչեն, և բարի տարի կը մաղթեն իրարու։

Բայց շատ պտուղ ուտելը կը ճնաստ, ստամոքսը կը խանգարուի, պէտք է չափաւոր ուտել։ Ա՛ն բանը գիտցող տղաքը չեն հիւանդանար։

Ասկէ զատ, պէտք է յիշել աղքատներն ալ, անոնց բաժին հանել մեր ունեցած պտուղներէն։

ԳԵՂԱՑԻ ԵՒ ՋՐԱԲՆԱԿ ՈԳԻ

(Ժողովրդական հեքեաք)

Գեղացիին կայինը պատահմամբ գետը ինկաւ։ Խեղճ մարդը ցաւէն նստաւ գետեղերը, սկսաւ լալ։

Անոր լացին ձայնը հասաւ ծեր ջրաբնակ ոգիին։ Ցաւեցաւ գեղացիին վրայ, գետէն հանեց ոսկի կային մը և հարցուց. «Ա՞ն է քու կայինդ»։

—Ո՛չ, ատ չէ՛, պատասխանեց գեղացին։

Ոգին հանեց ուրիշ մը՝ արծաթէ կային մը, և

ցոյց տալով գեղացիին՝ հարցուց. «Ա՞ն է»։

—Ո՛չ, ըսաւ նորէն գեղացին։

Այն ատեն ջրաբնակ դեւը ջրէն հանեց մարդուն իսկական կացինը։ Գեղացին ուրախացաւ. «Հա՛հ, ա՛տ է իմ կացինս» ըսաւ։

Ոգին, այն ատեն, երեք կացիններն ալ մարդուն նուիրեց՝ անոր ճշմարտախօսութեանը համար։

Տուն դառնալով՝ գեղացին ցուցուց կացինները իր դրացիներուն և պատմեց ինչ որ պատահած էր։

Ամբողջ գեղը խմացաւ այս բանը։ Գեղացի մը փափաքեցաւ ինք ալ ոսկի կացին ունենալ։ Գետափը գնաց, իր կացինը ջուրը ձգեց և նստաւ։ Նստաւ ու սուտ լայ սկսաւ։

Ջրաբնակ ոգին հանեց ոսկի կացին մը և հարցուց.

«Ա՞ս կացինը քո՞՝ւկդ է»։

Գեղացին ուրախացաւ և աղաղակեց։

«Ի՛մն է, ի՛մն է, ծերուկ»։

. . . Ջրաբնակ ոգին մոռաւ ջուրը, կացինն ալ հետը տարաւ։ Գեղացին շատ երկար ժամանակ նստաւ գետեղերը, բայց բան մը չանցաւ ձեռքը։ Եւ դարտակ դարտակ, քոնի՛քոսը տուն դարձաւ։

ԹԻՒԵՐ

1 2 3 4 5 6 7 8 9 0

ՀԱՍՈՒՆՑԱԾ ՀԱՍԿԵՐ

Երկրագործին համար որչափ ուրախութիւն է այն օրը երբ կ'երթայ տեսնել թէ իր արտերը հասա՞ծ են։ Եւ երբ կը տեսնէ որ հասկաւորուած ցորենները շիկակարմիր գոյներով կը ծածանին մեղմաշունչ հովերէն, «վա՜յ, կ'ըսէ, հնձելու ժամանակն հասած է»։

Ուրախութեամբ լեցուած՝ տուն կը դառնայ, աւետիս կուտայ բոլոր ընտանիքին։ Իսկոյն կը պատրաստուին, տան աշխատաւոր կարիճ երիտասարդներ և, եթէ չբաւեն, երբեմն օրականով մշակներ ալ կը վարձեն, և այսպէս արտերնուն հունձքը կը սկսի։

Նախնիքներէն մնացած բարի սովորութիւն մը ունէր գիւղական ժողովուրդը. որո՛ւ արտ որ շուտ հասնէր, դրացիներն ու բարեկամները կ'երթային անոր օգնելու։ Նախ անոր արտը կը քաղէին և ապա՝ փոխադարձաբար՝ ինք ալ կ'երթար անոնց արտը կը քաղէր։ Այսպէս, իրարու կ'օգնէին համաշխատ կերպով, բովանդակ գեղացիներուն արտերը ամբողջապէս կը քաղուէին։ Մե՛ղք որ այս գեղեցիկ սովորութիւնը հիմա շատ նուազած է։

ԿԱՐԴԱՑՈՂ ՀՈՎԻՒԸ

Պետրոսը բարի ու քաջ տղայ էր։ Պզտիկ հասակէն սկսեր էր հօրը ոչխարները արածել անտառներն ու դաշտերը։ Ընկերներ ալ ունէր ղորոնք շատ կը սիրէր։ Իր պապերէն մնացած ժամագիրք

մ՚ունէր զոր իր պարկին մէջ դրած՝ միշտ հետը կը տանէր։ Երբեմն ալ սուտ ու մուտ կարդալով՝ իր ընկերները կը խնդացնէր . . . ։

Ասանկով կարդալու մեծ սէր ծնաւ անոր մէջ, և խաչնարածութենէ հրաժարական տուաւ։ Զատուելու վայրկեանը քաղցր էր, ընկերները կուլային, ինք ալ կուլար . . . ։

Բայց Պետրոս գնաց քաղաք, հոն դպրոց մտաւ, դաս առաւ. կարդալ գրել սորվեցաւ, ետքը եկաւ իր գեղի դպրոցը վարժապետ եղաւ։ Իր ընկերներուն ալ բան կը սորվեցընէր, և գեղին մէջ ամենուն օգտակար կ՚ըլլար. վերջն ալ տէրտէր ըրին Պետրոսը։

ՆՄԱՆԱՁԱՅՆ ԲԱՌԵՐ

Կան բառեր որ միևնոյն կերպով կը հնչուին, բայց տարբեր նշանակութիւն կուտան, ինչպէս՝ քայլ-գոյլ սառ-սար, ճար-ճառ, վանկ-վանք, դեւ-թեւ, դի-թի, դոյլ-թոյլ դադար-թաթառ, բուռ-փուռ, զուբ-թուբ, լուռ-լուր, սեր-սէր և սեռ, ձիւն-սիւն, գիրկ-գիրք և կիր, կնիք-կնիկ, հօտ-հոտ, հարկ-յարկ, կառք-կարդ, ցախ-ձախ, պապակ-փափաք, թանաք-դանակ, բակ-փակ, յամր-համր, ուխտ-ուղտ, թաս-դաս, քեռի-դերի, յամառ-համար, հառաչ-յառաջ, ճանկ-ջանք, հոյն-յոյն, դուր-դուռ, ախտ-աղտ, ծագ-ձագ, որթ-որդ, երէկ-երեք, մարտ-մարա (ամիս) և մարդ, յարդ-հարթ, գունտ-գունդ, հերու-հեռու, դանկ-թանկ, փերթ-բերդ, մէգ-մէկ, դատ-թաթ, թագ-թակ, տուղտ-թուղթ, հոյլ-յոյլ, դիւր-թիւր, վարկ-վարք, ձողջոզ, թիակ-դիակ, խեռ-խեր, ձոյլ և ծոյլ։

ԿԱՐՄԻՐ ՀԱՒԿԻԹ

Զատիկ է. ամէն մարդ ուրախութեան մէջ է, ժամէն կ՚ելլէնք, տուն կ՚երթանք։ Իրարու կը շնորհաւորենք Քրիստոսի Յարութիւնը։ Մեծերուն ձեռքը կը պագնենք։ Ուրիշ ժամանակէ շատ աւելի ուրախ ու զուարթ ենք ինչու որ նոր նոր հագուստներ ենք հագած, և զատկական կարմիր հաւկիթն ընծայ կ՚առնենք։

Քառասուն օր տեւեց Մեծ Պահքը և հիմա որ ուտիք է, աւելի համեղ կուգայ այս հաւկիթը որ Զատկի կարմիր գոյնով ներկուած է։

Մեր տուներուն մէջ, մեր մայրերը խաչած ու ներկած են զայն մեզի համար։ Հաւկիթին հետ կ՚ուտենք նաև բաղարջ, որ խմորով ու եղով շինուած է։ Շատ շնորհակալ ենք մեր մայրիկէն։ Ան մեզի կ՚ըսէ թէ հայը ու մայր չունեցող տղաք ալ կան որոնց պէտք է բաժին հանենք մեր զատկական կարմիր հաւկիթէն։

ՏԿԱՐԱՑԱԾ ՀՈՂ

Փորձը ինքնին՝ իբրև վարժապետ՝ մեզի կը սորվեցնէ թէ երբ առանց հանգիստ տալու արտ մը վարենք ու ցանենք, կը տեսնենք որ առջի տարին մեծ արդիւնք կուտայ. հետեւեալ տարին հողին ուժը կը սկսի նուազիլ, երրորդ տարին, բոլորովին տկարանալով՝ ապարդիւն կ՚ըլլայ։ Դեղացի ժողովուրդը փորձով գիտէ աս բանը, ուստի երկու միջոց ի գործ կը դնէ՝ տկարացած հողին

նոր ուժ տալու համար.— կա՛մ քանի մը տարի անվար կը թողու, որ արտը ինքնին հանգչի և ուժ ստանալով պարարտանայ, և կա՛մ աղբ կուտայ և արտին պակսած ուժին տեղը լեցընելով կը մշակէ, և այսպէս արտը պարապ չի թողուր, ամէն տարի կը վարէ, կը ցանէ և արդիւնք կը ստանայ։ Միայն թէ գիտնալու է սերմը փոխել, այսինքն եթէ առջի տարին ցորեն ցանեց, յաջորդ տարին պէտք է խոտ ցանէ և կամ արտը աղբելով բանջարեղէն մշակէ, և աշնան վերջը, երբ բանջարեղէնները վերնան, կրնայ արտը վարել ու ցորեն ցանելը որով կրկնապատիկ արդիւնք կը ստանայ հետեւեալ տարին։



ԾԻԾԵՌՆԱԿ

Խեղճ ծիծառնակը ամբողջ ցորեկը չի հանգչիր, այլ միշտ թռչելով, դէս ու դէն իյնալով նիւթ կը հաւաքէ։

Նիւթ կը հաւաքէ, խոտ ու կաւ կը կրէ, իր բոյնը կը շինէ, լաւ կը փափկացընէ ու մէջը կը մտնէ։

Կը մտնէ մէջը, ձու կ'ածէ ու երեք շաբաթ վրան թուխս կը նստի, ձագուկներ կը հանէ։

Փափկիկ ձագերը հաղիւ դուրս եկած՝ մայրը կը թռչի, դէս ու դէն կ'իյնայ, մժեղներ կը բերէ ու զանոնք կը կերակրէ։

Քիչ ատենէն սիրուն ձագերը կը թեւաւորուին, բունէն դուրս կը թռչին և իրենց մօրը հետ ճամբայ կ'իյնան։ Լայն-լայն դաշտերու, խոր-խոր ձորերու, մութ անտառներու, բարձր սարերու, կապոյտ ծովերու վրայէն կ'անցնի, հեռու տեղ կ'երթայ։

Ձմեռը կ'անցնի, գարունը կուգայ, մեր ծիծառնակն ալ նորէն կը դառնայ, իր բոյնը կը գտնէ, կը ճչէ, կը ծըլուըլայ, քանդուածը կը շտկէ, կը կարկտէ, կը շինէ. նոր ձուեր կ'ածէ. նոր ձագեր կը հանէ, կը պահէ, կը մեծցընէ։ Աշնան ատեն առաջուան պէս ճամբայ կ'իյնայ.— լայն-լայն դաշտերու, խոր-խոր ձորերու, մութ անտառներու, բարձր սարերու, կապոյտ ծովերու վրայէն կ'անցնի, հեռու տեղ կ'երթայ։

ՍԵՂԱՆԻ ՎՐԱՅ

Սեղանի ատեն զգուշութեամբ իմ յատուկ տեղը պիտի նստիմ։

Սփռոցս պիտի անցընեմ վիզս կամ կոճակիս։

Հայր-մեր պիտի ըսեմ և պիտի սպասեմ որ կերակուր առնելու կարգը ինծի գայ։

Կերակուր առած ատենս զգուշութիւն պիտի ընեմ որ չթափի, և շնորհակալութիւն պիտի յայտնեմ։

Տաք կերակուրը չպիտի փչեմ և անհամբերութեամբ չպիտի ուտեմ այլ պիտի սպասեմ մինչեւ որ պաղի։

Կերակուրը ծամելու ատենս բերանս դոց պիտի պահեմ։

Ջուր խմելէ առաջ և ետքը բերանս պիտի սրբեմ անձեռոցով կամ սրբիչով։

Պզտիկ պատառներ պիտի առնեմ և բերանովս աղմուկ չպիտի հանեմ։ Ակռաներս չպիտի խառնեմ։

Կերակուրէն վերջ անձեռոցս պիտի ծալեմ։ Նորէն Հայր Մեր պիտի ըսեմ և յետոյ լուացուիմ։

Լուացուիլը մաքրութիւն է և առողջութեան կը նպաստէ։

ՀԱՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Կան բառեր որ իրարու մօտ նշանակութիւն կուտան, ինչպէս՝ բանուոր-գործաւոր, աւագ-մեծ, որմ-պատ, մատեան-գիրք, վաճառել-ծախել, ննջել-նիրհել և քնանալ, երերցնել-շարժել, պոչ-պոչուտուն և գէս, կողմ-կոյս և դի, իղձ-փափաք և տենչ, ընծայ-նուէր և պարգև, խուժան-ամբոխ, ուրախութիւն-բերկրանք, ցնծութիւն և խնդութիւն, ձև-եղանակ և կերպ, ակումբ-ժողով, կաճառ և գումարում, երանգ-գոյն և թոյր, հովանիշուք և ստուեր, չիթ-կամիլ և կայլակ, տապան-գերեզման և չիրիմ, ճիրան-մագիլ և ճանկ, որկոր-կոկորդ, ոտնաման-կօշիկ, ոսկց, ծուղակ-թակարդ, ոսկի-թարախ, վախճան-վերջ, տուժել-վնասել, ասր-բօշրդ, ապրիլ-ապրիլ և այլն։

ՎԵՐՋԱՆ ՄԱՍԻՆ

Հայ 1
Հայ 1
70,65
ՀՀ Ազգային գրադարան
NL0321209

8984

ԳԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

			Գանձեկան
1. Ս. Գարեգինի Մանկանց	10ող	Տիպ	4
2. Ս. ,, ,,	6ող	,,	5
3. Գ. ,, ,,	6ող	,,	5
4. Տարեկան Հեռագիրներ	5ող	,,	2
5. Լուսաւոր Դասընթաց	3ող	,,	3
6. Նոր Փաղց, աշխարհ. Հաւանութիւն			3
7. Փոքրիկ, պատիրազարդ	5ող	,,	1
8. Երիտասարդ Փոքրիկ	2ող	,,	6
9. Գործն. Ընթաց Շարադրութիւն	3ող	,,	3
10. Գոնապի Շարադրութիւն	2ող	,,	8
11. Ընտիրաւոր Հայ լեզուի	4ող	,,	2
12. Սկզբանք Հանճարոյներ. ի Շարադրութիւն	2ող	,,	3
13. ALPHABET FRANÇAIS. Տիպեր Ֆրանսիկ	2ող	,,	2
14. Տարր. Ընթացք Գրոցի, Ա. Մեծ. Ազգանունի	3ող	,,	2
15. Պատիրազարդ Գրքոյկան [նոր նոով]	3ող	,,	20
1000 հատ 25 դրամ.			
16. Յայտագիր Դաստիարակ Գործարանութիւն	5ող	,,	2
17. Դպրոցական Հանճարոյներ, միջին տրամ	2ող	,,	4
18. Գարդարարութիւն, գործ E. E. White-ի			5
19. Առաջարկութիւն Հ. Պետրոսեանի			5
20. Հանճարոս Դրամատիրութիւն Ս. Հարիւրեանի	2ող	,,	3
21. Դրեթս Հայոց, Գերմանիներ			5
22. Նոր Հայ մանուկներուն, Ս. Գարեգինի	2ող	,,	1.20
23. Գանձարանութիւն Գրչիներու, [illegible] Գ.ող.			3
24. Հիւսի, գիտարանիներու դրոյ դասեր, Գ. Մնացականեան			3
25. Գանձարանութիւն Գասանիներու, Յուսիկ Գ.ող.			3
26. ԳԻՐՔԱՆ [illegible]			100
27. Անձարհանգրութիւն [illegible] Գ. ի.			2
28. Գիրքուածներ. Տպագրութիւն			5
29. Տիպ Գրանգիտութիւն, Ա. Գ.ող. Անդրանիկ			5
30. Գրագրանութիւն մեղրանի գրագրան			5
31. Եղանդաղ Ուսումն. [illegible] Ս. Գարեգինեան			5
32. Բնանկելին, Լանկելլոս, S. L. [illegible] ,,[illegible]"			5
33. Օտ. Տարազութիւն, Ս. Գարեգինեան			5
34. ԱՅԲ ԳԻՐՔ 33 գրանց (գնարգի ծանր			35
35. Երգարանութիւն ,,նոր Գիրոց"			5
36. Լիսեանար Գրագրուցակ			
37. Դարձեալ Գրիս. Գարեգինեան, Ս. Մանա			4
38. Հանդիսարան Գարդարագիտութիւն			6
39. Որդի յաղթեր, Գ. Մելրեան Ս. Տաճեան			
40. Հանդարտ Գ. Գարեգինեան, դասատուներու համար			
41. Դրագիտութիւն Հանճարոս (մասնաբաժանեալ նոով)			
42. Nouvelle Méthode. II. Livre, par Mme. Satinik			
43. Բարգաստութիւն Ս. Գասարագի, Գրոշ. Գան.			
44. Ընթերցարան Մարդեան Լեզուի Ս. Տարի			[illegible]

Հասցէ՝ ՍՊԱՍ ԳԻՒՂԻՆ,

Խորասանեան խան, Սիրեղեի Գ. Գալիս